ԾԻԼՆ
ԱՒԱՐԱՅՐԻ

Բ. ՏԱՐԻ 1867 ԹԻՒ Ե.

ՄԱՅԻՍ

ԿԱՆՈՆԳԻՐՔ

(Շարունակութիւն, տես թիւ Դ. երես 167)

Կանոնք երկրորդ առաքելական 'ի յԵրուսաղէմ. Գլուխ ԶԴ.

Ա. Վասն ձեռնադրութեան եպիսկոպոսաց։
Բ. Վասն ժառանգաւորաց ձեռնադրութեան։
Գ. Վասն Տէրունական պատարագին։
Դ. Վասն դիտից Եկեղեցւոյ։
Ե. Վասն կնաթող քահանայից։
Զ. Վասն ժառանգաւորաց որ զաշխարհական հոգս յանձն առնուն։
Է. Վասն սրբոյ Զատկին։
Ը. Վասն հաղորդելոյ յաւուր ուրբաթին որ յուխտէն իցեն։
Թ. Վասն որ անկատար զամն թողուն։
Ժ. Վասն ոչ հաղորդելոյ ընդ անհաղորդին։
ԺԱ. Վասն լուծեալ քահանային։
ԺԲ. Վասն որք բանադրեալ իցեն։
ԺԳ. Վասն եպիսկոպոսի որ զայլոց իշխանութիւն բռնադատէ։
ԺԴ. Վասն ժառանգաւորաց որ յօտար տեղիս պանդխտանան։
ԺԵ. Վասն ոչ ձեռնադրելոյ զերկկանայս 'ի քահանայութիւն։
ԺԶ. Վասն ոչ ձեռնադրելոյ քահանայ որ զայրի կին առնու։
ԺԷ. Վասն զաղգականս ոչ առնելոյ կին։

ԺԸ. Վասն ոչ տալոյ երաչխաւոր ժառանգաւորի։
ԺԹ. Վասն որ ոչ կամաւք ներքինացեալ են։
Ի. Վասն որ կամաւք զինքն կրճատեաց։
ԻԱ. Վասն ժառանգաւորի որ զինքն կրճատեաց։
ԻԲ. Վասն ժողովրդականի որ զինքն կրճատեաց։
ԻԳ. Վասն եպիսկոպոսի որ 'ի մեղս զառածանեալ է։
ԻԴ. Վասն որք ամուսնանան ժառանգաւորաց։
ԻԵ. Վասն չլինելոյ հարկանող զեպիսկոպոս։
ԻԶ. Վասն եպիսկոպոսի որ լուծեալ իցէ։
ԻԷ. Վասն եպիսկոպոսի թէ ընչիւք ձեռնադրի։
ԻԸ. Վասն եպիսկոպոսի որ իշխանաւ վարեցեալ է։
ԻԹ. Վասն թէ ոք երէց անարդէ զեպիսկոպոս։
Լ. Վասն զի մի ոք յաւտար եպիսկոպոսաց ընդունել։
ԼԱ. Վասն եպիսկոպոսին իւրաքանչիւր աղդի դիտելն պարտ է։
ԼԲ. Վասն չձեռնադրելոյ զեպիսկոպոս այլ վիճակ։
ԼԳ. Վասն թէ ոք զձեռնադրեալ եպիսկոպոս ոչ ընկալաւ։
ԼԴ. Վասն երկիցս տարւոջ ժողով լինելոյ։
ԼԵ. Վասն Եկեղեցւոյ իրաց։
ԼԶ. Վասն երիցու եւ սարկաւագի չզործել ինչ առանց կամաց եպիսկոպոսի։
ԼԷ. Վասն ընչից եպիսկոպոսին եւ Եկեղեցւոյն։
ԼԸ. Վասն իշխանութիւն ունելոյ եպիսկոպոսաց յԵկեղեցւոյ։
ԼԹ. Վասն եպիսկոպոսաց որ քուէից պարապին։
Խ. Վասն սարկաւագաց զնմանս արարեալ։
ԽԱ. Վասն եպիսկոպոսի որ վաչխ առնու։
ԽԲ. Վասն թէ եպիսկոպոս ոք զթերահաւատից աղօթակից լինի։
ԽԳ. Վասն թէ եպիսկոպոս որք զթերահաւատից մկրտութիւն ընդունի։
ԽԴ. Վասն որոշելոյ զկնահանէան։
ԽԵ. Վասն որք անդոռնեն զամուսնութիւն եւ զմտակերութիւն, եւ որք զդինի ճաշակեն։
ԽԶ. Վասն թէ եպիսկոպոս ոք զդարձեալն 'ի մեղաց ոչ ընդունի։
ԽԷ. Վասն որ ոչ ճաշակեն յաւուր ծոնիլ 'ի մսոյ եւ 'ի գինւոյ։
ԽԸ. Վասն ժառանգաւորի որ ուտէ 'ի կապելոջ։
ԽԹ. Վասն ժառանգաւորի որ թշնամանէ զերէց եւ զեպիսկոպոս։
Ծ. Վասն ժառանգաւորի որ թշնամանէ զերէց։
ԾԱ. Վասն թէ ոք ժառանգաւոր այլանեսցէ զվնասեալ մարմնով։
ԾԲ. Վասն երիցու որ անիրաւթ առնէ զքահանայութիւն եւ զդ ժողովուրդն խրատելոյ։

Սահմանք և կանոնք սուրբ առաքելոցն 'ի յետո Ղևոնդայ առաքեալ հելլենասաց։

Ա. — ԼԵ. Եպիսկոպոս ձեռնադրեսցի յեպիսկոպոսաց յերկուց և կամ յերից։

Բ. — ԼԶ. Երէց կամ սարկաւագ կամ այլք 'ի ժառանգաւորաց 'ի միոջէ եպիսկոպոսէ լինել։

Գ. — ԼԷ. Եթէ ոք եպիսկոպոս կամ երէց արտաքոյ քան զհրամայեալն Տեառն 'ի պատարագն կամ 'ի սեղանն այլ ինչ պատրաստիցէ մեղր կամ կաթն, կամ փոխանակ գինւոյ այլ կարգ պատրաստութիւնս կամ հաւ կամ այլ ինչ կենդանի արտաքոյ քան զհրամայեալն արասցէ՝ լուծցի։ Բայց 'ի դիպող ժամանակի 'ի նոր արմտեաց հասկ կամ խաղող մատուցանել առ սեղանն և ձէթ 'ի սուրբ աշտանակն և խունկ 'ի ժամ պատարագին։

Դ. — ԼԸ. Բայց այլ ամենայն միրք 'ի տունս առաքեսցին եպիսկոպոսին և յերիցանցն, այլ 'ի սեղանն մի մատիցեն յայսմ էզի եպիսկոպոսն և երիցունքն բաժանեսցեն սարկաւագաց և այլոց ժառանգաւորաց։

Ե. — ԼԹ. Երէց կամ սարկաւագ զկին իւր մի հանցէ պատճառանօք երկիւղածութեան, ապա թէ հանցէ 'ի բաց որոշեսցի իսկ 'ի նմին յամառեալ լուծցի։

Զ. — Խ. Եպիսկոպոս կամ երէց կամ սարկաւագ զաշխարհական հոգս յանձն մի առցէ, ապա թէ ոչ լուծցի։

Է. — ԽԱ. Եպիսկոպոս կամ երէց և սարկաւագ զսուրբ չարչարանաց զաւրն նախ քան զդարձանային զաւդաւորութիւն թէ ընդ հրեայս կատարեսցէ լուծցի։

Ը. — ԽԲ. Եպիսկոպոս և երէց և սարկաւագ որ ժողովոց ոչ հաղորդ եսցի զպատճառն ասասցէ՝ եթէ իցէ իրաւացի թողութեան հասցէ, ապա թէ ոչ ասասցէ, որոշեսցի. որպէս պատճառք վնասու եղեալ ժողովրդոցն և կարծիս տուեալ զերիցուէն որ մատոյցն որպէս ոչ առողջութեամբ մատուցեալ։

Թ. — ԽԳ. Զամենայն զմոռեալսն Եկեղեցի զհաւատացեալսն և դրոց լուեալս ոչ մնացեալս աղաւթից սրբոց հաղորդութեան երբեւ զանկարգութիւնս արարեալ Եկեղեցւոյ 'ի բաց որոշեսցի։

Ժ. — ԽԴ. Եթէ ոք ընդ անհաղորդին թէ և 'ի տան աղաւթակից լիցի 'ի բաց որոշեսցի։

ԺԱ. — ԽԵ. Եթէ ոք լուծեալ 'ի քահանայութենէ այլ ոք քահանայ աղաւթակից լիցի իբրեւ քահանայի լուծցի։

ԺԲ. — ԽԶ. Եթէ ոք 'ի ժառանգաւորաց որոշեալ երթիցէ այլ քաղաք և ընկալցին առանց ընծայական գրոյ, որոշեսցին որք ընկալան և որ ընկալեալն եղեւ, թէպէտեւ էր ընդունելի՝ առաւել եւս երկարաստի որոշումն իբրեւ ստոյ և պատրուղի ոչ է զեկեղեցի Աստուծոյ։

ԺԳ. — ԽԷ. Եպիսկոպոսի ոչ է արժան թողուլ զիւր իշխանութիւն և այլոց վաղել, թէեւ 'ի բաղմաց հարկեսցի, բայց եթէ լցեն պատճառք ինչ իրաւացիք որ զայս բռնաբարեն զնա առնել, որպէս զի առաւել չահել կարացելոյ զնոսա որք անդն են երկիւղածութեան բանիւ աւգտեցուցանել և զայս ոչ յինքենէ այլ աղաչանաւք մեծաւք։

ԺԴ. — ԽԸ. Եթէ ոք երէց կամ սարկաւագ կամ ով եւ լցէ 'ի ժառանգաւորաց 'ի բաց ընկեցեալ զիւր պանդխտութիւն յայլ երթիցէ և ամենեւին փոխեալ չրջիցի այլում պանդխտութեան առանց կամաց եպիսկոպոսին իւրոյ, զայնպիսին հրամայեմք ոչ եւս քահանայանալ. մանաւանդ թէ բաղում անգամ յորդորեալ իւրոյ եպիսկոպոսին ոչ լուաւ, այլ յամառեալ անկարգութեան իբրեւ զաշխարհական հաղորդեսցի անդէն ընդ նոսա, ապա եթէ եպիսկոպոսն առ որում է նա առ ոչինչ համարեալ, զի 'ի վերայ նորա սահմանեալ դատարկութիւն, ընկալցի զնա ընդ ժառանգաւորս՝ 'ի բաց որոշեսցի իբրեւ զվարդապետ անկարգութեան։

ԺԵ. — ԽԹ. Որ ընդ երկուս ամուսնութիւնս խառնակեցաւ յետ մկրտութեան կամ հարճս ստացաւ, ոչ կարէ լինել եպիսկոպոս կամ երէց կամ սարկաւագ կամ բնաւ իսկ 'ի քահանայական կարգէ։

ԺԶ. — Ծ. Որոյ զայրի առեալ է կին կամ զհանեալ կամ զաղախին կամ զբոզ, ոչ կարէ եպիսկոպոս լինել, կամ երէց կամ սարկաւագ կամ բնաւին 'ի քահանայական կարգէ։

ԺԷ. — ԾԱ. Որոյ երկուս քոյս առեալ է կամ քեռորդի ոչ կարէ ժառանգաւոր լինել։

ԺԸ. — ԾԲ. Ժառանգաւոր ոք երաշխաւորս տուեալ լուծցի։

ԺԹ. — ԾԳ. Ներքինի ոք եթէ բռնութենէ մարդկան եղեւ կամ 'ի հալածանս կորեցան արականքն, կամ այնպէս ծնան

և էր արժանի եպիսկոպոսութեան, եղիցի։

Ի.— ԾԴ. Որ ոք զինքն կրճատեաց ոչ եղիցի քահանայ, զի անձնասպան է և Աստուծոյ արարածոյն թշնամի։

ԻԱ.— ԾԵ. Եթէ ոք 'ի վիճակելոցն զինքն կրճատեաց 'ի բաց լուծցի, քանզի սպանող եղեւ անձին իւրում։

ԻԲ.— ԾԶ. Յողովրդական ոք որ զինքն կրճատեաց 'ի բաց որոշեսցի զերեք ամ, քանզի դրժող է կենաց իւրոյ։

ԻԳ.— ԾԷ. Եպիսկոպոս ոք կամ երէց կամ սարկաւագ 'ի պոռնկութեան կամ երդման կամ 'ի գողութեան ըմբռնեալ լուծցի միանգամայն, այլ ոչ որոշեսցի, քանզի ասէ գիր, ոչ առցէ Տէր վրէժս երկիցս 'ի միասին, նմանապէս և ամենայն վիճակեալք 'ի պաշտաւն ժառանգութեան։

ԻԴ.— ԾԸ. Որք եկեալ են 'ի վիճակն չեւ եւս ամուսնացեալք, հրամայեմք նոցա ամուսնանալ զդրակարգացս միայն և զսաղմոսսն։

ԻԵ.— ԾԹ. Եպիսկոպոս կամ երէց կամ սարկաւագ թէ հարկանելով զհաւատացեալ մեղուցեալս կամ զհաւատասպիրատս այսպէս կամեսցի երկեցուցանել, լուծանել զնոսա հրամայեմք, քանզի ոչ ուրուք զայս Տէրն ուսոյց, այլ զնորին հակառակն ինքն տանջեցաւ՝ այլ ոչ զոք եհար, թշնամանեցաւ և ոչ փոխարէն թշնամանեաց, չարչարեցաւ և ոչ սպառնացաւ։

ԻԶ.— Կ. Եպիսկոպոս կամ երէց կամ սարկաւագ լուծաւ որդարապէս յաղագս յայտնի ստոյգանաց և իշխեսցեն յանդիմանել և մերձենալ 'ի նոյնպիսում զոր երբեմն ընձեռեալ էր նմա 'ի սպասաւորութիւն պաշտաման, սա ամենեւին արտաքս հանեալ ընկեցեալ լիցի յեկեղեցւոյն։

ԻԷ.— ԿԱ. Եթէ ոք եպիսկոպոս 'ի ձեռն ընչից այսմ պատուոյ հասանել կարաց, կամ երէց կամ սարկաւագ 'ի բաց լուծցի, նաեւ որ ձեռնադրեացն և հատեալք և ընկեցեալք միանգամայն և 'ի հաղորդութենէ լերբեւ զՍիմոն մոգ յինէն Պետրոսէ։

ԻԸ.— ԿԲ. Եթէ ոք եպիսկոպոս զինուորական իշխանութիւն վարեցեալ բռնութեամբ կալաւ զնկեղեցի լուծցի, և 'ի բաց որոշեսցի և ամենեքին որք հաղորդին ընդ նմա։

ԻԹ.— ԿԳ. Եթէ ոք երէց արհամարհեսցէ զիւր եպիսկոպոս և առանձին ժողովս արասցէ և սեղան կանգնեսցէ ոչինչ

կարացեալ գտանել զեպիսկոպոսն 'ի բարեպաշտութենէ և արդարութենէ 'ի բաց լուծցի իբրեւ զիշխանութիւն սկրսող, քանզի բռնաւոր է և այլ վիճակեալք որ ընդ նոսա միաբանեսցին, այսոքիկ յետ միանգամ և երկիցս և երիցս եպիսկոպոսին աղաչելոյ եղիցի նզովեալ։

Լ. — ԿԴ. Եթէ երէց կամ սարկաւագ իւր եպիսկոպոսէն ընդ բանին եղեւ որոշել զնա՝ ոչ եղիցի իրաւացի յայլմէ եպիսկոպոսէ ընդունել, այլ յայնմանէ որ որոշեաց զնա, բայց թէ դէպ լիցի մեռանել որ որոշեաց եպիսկոպոսն։

ԼԱ. — ԿԵ. Զի զոք յաւտարաց եպիսկոպոսաց կամ երիցանց կամ սարկաւագաց առանց ընծայական թղթոյ ընդունել և կամ թէ ընդունիցեն սակայն քննել եթէ իցեն քարոզ բարեպաշտութեան ընկալեալ լիցին ապա թէ ոչ՝ զղէտս նոցա տացին, իսկ 'ի հաղորդութիւն մի՛ ընկալցին, վասն զի բազում ինչ լինի խաբէութեամբ։

ԼԲ. — ԿԶ. Զեպիսկոպոսունս իւրաքանչիւր ազգի դիտել՝ պարտ է զիւրեանց առաջինան և համարել պարտ է իբրեւ զգլխաւոր և մի ինչ աւելորդ առնել առանց նորա կամաց, բայց զայն միայն իւրաքանչիւր ումեք, որչափ իւրում իշխանութեան անկ է և որք ընդ նովաւ տեղիքն են, այլեւ ոչ նըմա առանց նոցա կամաց առնել ինչ. զի այսպէս միաբանութիւն իցէ և փառաւորեսցի Աստուած 'ի ձեռն Յիսուսի և սրբոյ Հոգւոյն։

ԼԳ. — ԿԷ. Եպիսկոպոս ոք մի՛ իշխեսցէ արտաքոյ իւրոյ սահմանացն ձեռնադրութիւնս առնել, որք ոչ ընդ նորա ձեռամբն են քաղաքք կամ գաւառք, ապա եթէ յանդիմանեսցի զայս արարեալ, առանց կամաց այնոցիկ որք ունին զքաղաքսն կամ զտեղիսն, լուծցի ինքն և որ ձեռնադրեցաւն։

ԼԴ. — ԿԸ. Եթէ ոք ձեռնադրեալ եպիսկոպոս ոչ ընկալաւ զպաշտօնն և հոգս ժողովրդեանն ընձեռելոյ նմա, սա որոշեալ լիցի, մինչեւ ընկալցի։ Նոյնպէս երէց կամ սարկաւագ. ապա եթէ երթեալ ոչ եղեւ ընկալեալ այս ոչ 'ի նորա կամաց այլ 'ի ժողովրդեանս խաւութենէ, ինքն եղիցի եպիսկոպոս։ Իսկ ժառանգաւորք քաղաքին որոշեսցին, զի այնպիսի ժողովրդեան խրատիչք ոչ եղեն։

ԼԵ. — ԿԹ. Երկիցս 'ի տարւոջ ժողով լիցի եպիսկոպոսաց և

քննեսցեն առ միմեանս զհրամանս բարեպաշտութեան և ըզ պատահեալն եկեղեցական ընդդիմաբանութիւնս լուծցեն, միանգամ 'ի չորրորդ շաբաթու պենտեկոստէին և երկրորդն յաշնան։

ԼԶ. — Հ. Ամենայն եկեղեցական իրաց եպիսկոպոս կալցի հոգ, և վարեսցէ զնոսա իբրեւ հայեցեալ Աստուծոյ մի՛ լիցի նմա արժան դողանալ ինչ անտի կամ աղդականաց իւրոց զայն չնորհել, բայց եթէ աղքատ իցեն աւգնել, այլ ոչ պատճառանաւք սոցա զեկեղեցւոյն աւցտել։

ԼԷ. — ՀԱ. Երիցունք և սարկաւագունք առանց կամաց եպիսկոպոսին մի՛ ինչ կատարեսցեն. զի նմա հաւատացաւ ժողովուրդն Տեառն և վասն ոգւոց նոցա բան պահանջեսցի։

ԼԸ. — ՀԲ. Եղիցին յայտնի եպիսկոպոսին իրք, եթէ առանձին ինչ ունի և Եկեղեցւոյն յայտնի. զի իշխանութիւն կալցի իւրոցն. վախճանեալ եպիսկոպոսն որոց կամի և որպէս կամի թողու և զի մի պատճառանաւք և եկեղեցական իրաւք անկանել իւրմէ եպիսկոպոսին. զի թերեւս կին և մանկունս ստացեալ ունիցի կամ աղդականս կամ ծառայս, քանզի իրաւացի է այս Աստուծոյ և մարդկան զի մի՛ Եկեղեցւոյն վնաս ինչ կրել անդիտութեամբ եպիսկոպոսին իրաց և մի՛ զեպիսկոպոսն և զաղդականս իւր պատճառանաւք Եկեղեցւոյն, յամենայնէ զերծանել և կամ՝ իրս ինչ անկանել նորա աղդականացն և մահու նորա լինել պատճառք հայհոյութեան։

ԼԹ. — ՀԳ. Հրամայեմք եպիսկոպոսի իշխանութիւն ունել Եկեղեցական իրաց, քանզի եթէ զպատուական մարդկան ոգիս նմա հաւատալի է, առաւել եւս իրաւացի զիրս կատարել, որպէս զի ըստ իշխանութեան նորա խնամ ունել կարաւորելոցն։ Եւ 'ի ձեռն երիցանց և սարկաւագաց լինել խնամակալութիւն երկիւղիւ Աստուծոյ և ամենայն զգուշութեամբ առնուլ և ինքեանք իսկ եթէ կարաւ ինչ իցեն և յաւտարաց եղբարց 'ի պէտս, զի մի՛ ինչ իրաւք նոցա պակասութիւն լիցի, վասն զի աւրէնք Աստուծոյն հրամայեալ են, որք սեղանոյն պարապեալ են 'ի սեղանոյ անտի կերակրել, ըստ օրում և ոչ զինուորն իւրովք թոշակաւք զզէնս պատերազմաց բերէ։

Խ. — ՀԴ. Եպիսկոպոս կամ երէց կամ սարկաւագ քու իցէ

պարապետալ կամ դինարքուաց կամ դադարեսցին կամ լուծցին։

ԽԱ.—ՀԵ. Կիսսարկաւագաց կամ դրակարգացաց կամ սաղմոսերգաց զնմանսն արարեալ, կամ դադարեսցին կամ ո՞ր ոչեսցին, նմանապէս և ժողովրդականք։

ԽԲ.—ՀԶ. Եպիսկոպոս կամ երէց կամ սարկաւագ վաչխ և տոկոսիս պահանջելով 'ի փոխատուացն կամ դադարեսցին կամ լուծցին։

ԽԳ.—ՀԷ. Եպիսկոպոս կամ երէց կամ սարկաւագ թերահաւատից միայն աղաւթակից լեալ, որոշեսցին, ապա թէ եւ նոցա հրամայեսցեն իբրեւ քահանայից աղաւթել, լուծցին։

ԽԴ.—ՀԸ. Եպիսկոպոս կամ երէց կամ սարկաւագ զթերահաւատից զմկրտութիւն ընկալեալ, կամ զպատարագն լուծանել հրամայեմք, զի զինչ միաբանութիւն է Քրիստոսի ընդ Բելիարայ կամ զինչ մասն հաւատացելոյն ընդ անհաւատին։

ԽԵ.—ՀԹ. Եթէ ոք ժողովրդական զիւր կին հանեալ այլ առցէ և կամ զարձակեալն յայլմէ, 'ի բաց որոշեսցի։

ԽԶ.—Զ. Եպիսկոպոս կամ երէց կամ սարկաւագ կամ բընաւին իսկ 'ի քահանայական կարգէ յամուսնութենէ, 'ի մըսոյ և 'ի դինոյ, ոչ վասն ճգնաւորութեան, այլ պիղծ վարկանելով, զայնոսիկ 'ի բաց մեկնի, մոռացեալ՝ թէ ամենայն ինչ յոյժ բարի է զի արու և էգ արար Աստուած զմարդն, այլ հայհոյելով անգոսնեսցէ զգործաւորութիւն կամ ուղղեսցի կամ լուծցի և յեկեղեցւոյն 'ի բաց ընկեսցի նմանապէս և ժողովրդական ոք։

ԽԷ.—ՁԱ. Եթէ ոք եպիսկոպոս կամ երէց զդարձեալն 'ի մեղայ ոչ ընկալցի այլ 'ի բաց մերժեսցէ լուծցի զի տրտմեցուցանէ զՔրիստոս որ ասացն «Ուրախութիւն լինի յերկինս 'ի վերայ միոյ մեղաւորի որ ապաշխարէ։

ԽԸ.—ՁԲ. Եթէ ոք եպիսկոպոս կամ երէց կամ սարկաւագ յաւուր տաւնից ոչ ճաշակէ 'ի մսոյ և 'ի դինւոյ լուծցի որպէս զհարեալ խղճի մտաց իւրոց և պատճառք դայթակղութեան բազմաց եղեալ։

ԽԹ.—ՁԳ. Եթէ ոք ժառանգաւորաց թշնամանեսցէ զեպիսկոպոսն իրաւաբար լուծցի, քանզի իշխան ժողովրդեան քո ոչ հայհոյեսցի։

Ծ.—ՁԴ. Եթէ ոք ժառանգաւոր 'ի կապելոյ ըմբռնեսցի

ուսելով՝ որոշեսցի, բայց 'ի պանդոկուոջ միայն և 'ի ճանա-
պարհի յաղագս հարկ լինելոյ։

ԾԱ.—ՁԵ. Եթէ ոք ժառանգաւոր թշնամանեսցէ զերէց
կամ զսարկաւագ՝ որոշեսցի։

ԾԲ.—ՁՁ. Եթէ ոք ժառանգաւոր զխուլ կամ զկաղ կամ
զկոյր կամ զդէմն ՀԱՍԵԱԼ այպանեսցի, որոշեսցի նմանա-
պէս և ժողովրդականք։

ԾԳ.—ՁԷ. Եպիսկոպոս կամ երէց անփոյթ առնելով զքա-
հանայութենէ կամ զժողովրդոցն, ոչ խրատելով զնոսա 'ի բա-
րեպաշտութիւն որոշեսցի, ապա եթէ յամառեսցի չածել յուղ-
ղութիւն լուծցի։

ԾԴ.—ՁԸ. Եթէ ոք եպիսկոպոս կամ երէց 'ի ժառանգա-
ւորաց, որ կարաւտ լոցէ և ոչ տացի նմա զպէտսն որոշեսցի իբ-
րեւ զսպանող եղբաւր իւրոյ։

ԾԵ.—ՁԹ. Եթէ ստութեամբ ոք զվերադրեալսն ամպա-
րշտաց դիրս, իբրեւ զսուրբս Եկեղեցի մուծեալ առ 'ի ՀԱՍ
ժողովրդոց լուծցի։

ԾԶ.—Ղ. Եթէ ամբաստանութիւն ինչ եղիցի զհաւատա-
ցելոյ պոռնկութեան կամ շնութեան կամ այլ ինչ գործոց 'ի
բաց հրաժարելոց և յանդիմանեսցի 'ի ժառանգաւորութիւն
մի՛ եկեսցէ։

ԾԷ.—ՂԱ. Եթէ ոք ժառանգաւոր վասն մարդկային եր-
կիւղի հրէի կամ հեթանոսի կամ թերահաւատի՝ կորասցի և-
թէ զանուն քրիստոսի ունի՝ լուծցի և որոշեսցի, իսկ եթէ
ժառանգաւորի, լուծցի։

ԾԸ.—ՂԲ. Եթէ ոք եպիսկոպոս կամ երէց կամ սարկա-
ւագ կամ բնաւ իսկ 'ի քահանայական կարգէ, կերիցէ միս
արեամբ շնչոյ, կամ գաղանաբեկ կամ մեռելոտի լուծցի,
քանզի զայս աւրէնքն հրաժարեցուցին, ապա եթէ ժողովուր-
դական ոք լոցէ որոշեսցի։

ԾԹ.—ՂԳ. —Եթէ ոք 'ի ժառանգաւորաց գոցի զաւր
կիրակէին, կամ զշաբաթուն պահելով՝ որոշեսցի։

Կ.—ՂԴ. Եթէ ոք ժառանգաւոր կամ ժողովրդական մտցէ
'ի ժողովարան հրէից կամ թերահաւատից աղաւթել, լուծցի։

ԿԱ.—ՂԵ. Եթէ ոք ժառանգաւոր 'ի կռուի զոք հարցէ և
'ի միոջէ հարմանէն մեռցի, լուծցի վասն յանդգնութեան իւրոյ։

իսկ եթէ ժողովրդական լցէ, որոշեսցի։

ԿԲ. — ՂԶ. Եթէ ոք զկոյսն բռնաբարեալ, կալեալ, որոշեսցի և մի լցցի նմա արժան այլ առնուլ, այլ զնոյն իսկ ընդ որ հաճեցաւն, թէպէտ եւ ի տառապելոյ ոք լցէ։

ԿԳ. — ՂԷ. Եթէ ոք եպիսկոպոս կամ երէց կամ սարկաւագ, երկրորդ ձեռնադրութիւն ունիցի յումեքէ լուծցի նա և որ ձեռնադրեացն, բայց եթէ ցուցցէ ի թերահաւատից ունել նմա զձեռնադրութիւն, քանզի այսպիսեացս զմկրտեալսն կամ զձեռնադրեալսն ոչ հաւատացեալս և ոչ ժառանգաւորս լինել հնար է։

ԿԴ. — ՂԸ. Եթէ ոք եպիսկոպոս կամ երէց կամ սարկաւագ կամ դրակարդաց կամ սաղմոսերգող, զսուրբ քառասնորդսն ոչ պահեսցէ և զչորեքշաբթի և զուրբաթ լուծցի, բայց եթէ վասն հիւանդութեան մարմնոյ ինչ խափան լինիցի իսկ եթէ ժողովրդական ոք լցէ որոշեսցի։

ԿԵ. — ՂԹ. Եթէ ոք եպիսկոպոս կամ երէց կամ այլ ոք ժառանգաւորաց պահեսցէ ընդ հրէայսն կամ տաւնեսցէ ընդ նոսա կամ ընկալցի ի տաւնից նոցա ընծայս որպէս թէ բաղարջ կամ այլ ինչ այսպիսեացս, լուծցի։

ԿԶ. — Ճ. Եթէ ոք 'ի քրիստոնէից ձէթ տարցի 'ի մեհեանս հեթանոսաց կամ 'ի ժողովարանս հրէից ճրագունս, լուծցի։

ԿԷ. — ՃԱ. Եթէ ոք ժառանգաւոր կամ ժողովրդական առցէ Եկեղեցւոյ մոմեղէն կամ ձէթ, որոշեսցի, և հինգ պատիկ տուժեսցի, հանդերձ որով առն անաւթով ոսկեղինաւ սրբբեցելով մի ոք իւր պէտս դողացեալ, զի աւրինաղանցութիւն է, ապա թէ ոք ըմբռնեսցի պատուհասիւ որոշեսցի։

ԿԸ. — ՃԲ. Եպիսկոպոս ամբաստանեալ առաջի հաւատարմոյ ոմանց կամ հաւատացելոց, կարդալ զնա հարկաւոր է եպիսկոպոսաց, եթէ եկեալ խոստովանեսցի՝ յանդիմանել ըստ նա սահմանեսցի պատուհասն, ապա եթէ կարդացեալ ոչ լուաւ կոչեսցի երկրորդ անգամ առաքելոցն առնա երկուց եպիսկոպոսաց, ապա եթէ այսպէս ոչ լուիցէ կոչեսցի և երրորդ անգամ դարձեալ երկուց եպիսկոպոսաց առաքելոց առնա, ապա եթէ և այնպէս արհամարհեալ և ոչ եկեսցէ 'ի ժողովն վճիռ մահու 'ի վերայ այսպիսոյն որ ինչ արժան թուեսցի։

ԿԹ. — ՃԳ. Որպէս զի մի՛ շահիլ ինչ թուեսցի 'ի վախճանել

ցոյն և 'ի վկայութիւն զեպիսկոպոսէ զթերահաւատ ոք մի ընդունել, այլեւ ոչ զհաւատացեալսն մի, քանզի 'ի բերանոց երկուց և երից վկայից հաստատեսցի յամենայն բան։

Հ.—ՃԳ. Զի ոչ է պարտ եպիսկոպոսին եղբաւր կամ որդւոյ կամ այլում ազգականի շնորհել զպատիւ եպիսկոպոսութեան, որպէս ինքն կամի ձեռնադրել, քանզի ժառանգաւոր եպիսկոպոսութեան իւրոյ առնել չէ իրաւացի զԱստուծոյն շնորհել մարդկային սիրոյ, քանզի և ոչ զեկեղեցին Քրիստոսի ընդ ժառանգութեամբ արժան է դնել, ապա թէ ոք արասցէ զայս անհաստատ լիցի ձեռնադրութիւն նորա և ինքն որոշեսցի։

ՀԱ.—ՃԵ. Եթէ ոք խեղակամբ է և վիրաւորեալ անդամաւք և արժանի իցէ եպիսկոպոսութեան եղիցի, քանզի ոչ խեղութիւն մարմնոյ չինել զնա արժանի հրամայէ, այլ անձին պղծութիւն։

ՀԲ.—ՃԶ. Խոյլ և կոյր մի լիցի եպիսկոպոս ոչ իբրեւ զպղծեալ, այլ զի մի Եկեղեցւոյն խափանեսցին։ Եթէ ոք դեւ ունիցի ժառանգաւոր մի եղիցի, իսկ մաքրեալն ընդունելի եղիցի և եթէ իցէ արժանի եղիցի։

ՀԳ.—ՃԷ. Զառ ի հեթանոսաց եկեալն և մկրտեալն և կամ 'ի խառնակ վարուց ոչ իրաւացի է վաղվաղակի ընձեռել յեպիսկոպոսութեան, քանզի անիրաւ է զոր չեւն փորձեալ է՝ այլոց լինել վարդապետ, բայց եթէ երբէք Աստուածային շնորհացն եղիցի։

ՀԴ.—ՃԸ. Ասացաք ոչ եթէ ոչ է պարտ եպիսկոպոսին արկանել զինքն յերկրաւոր հոգս, այլ պարապել եկեղեցական պիտոյիցն, ապա թէ ոչ 'ի բաց դիցէ, զի ոչ ոք կարէ երկուց տերանց ծառայել ըստ տէրունական հրամանին։

ՀԵ.—ՃԹ Ծառայս 'ի ժառանգութիւն ընձեռել առանց տէրացն կամաց ոչ հրամայեմք 'ի տրամութիւն ստացողացն, քանզի տանցն կործանումն է այս գործ, ապա եթէ երբէք արժանի երեւեսցի ծառայն առ 'ի ձեռնադրութիւն աշխիճանին, որպէս Ընեսիմոն երեւեցաւ և դողացուսցեն տեարք իւրեանց և ազատեսցեն և 'ի տանէն 'ի բաց առաքեսցեն, եղիցի։

ՀԶ.—ՃԺ. Եպիսկոպոս կամ երէց կամ սարկաւագ զաւրականութեանց պարապեալ և զերկոսեան առնել կամեցեալ,

ունել զՀռոմայեցւոց իշխանութիւն և զքահանայութիւն լուծանել պարտ է, քանզի կայսերն կայսեր և Աստուծոյն Աստուծոյ։

ՀԷ. — ՃԺԱ. Եթէ ոք թշնամանեսցէ թագաւոր և զիշխան իրաւաբար պատուհաս կրեսցէ, եթէ ժառանգաւոր իցէ լուծցի, իսկ եթէ ժողովրդական որոշեսցի։

ՀԸ. — ՃԺԲ. Եպիսկոպոս կամ երէց որ ճշմարտութեամբ ունիցի զմկրտութիւն և վերստին մկրտեսցէ զնա կամ զպղծեալն յամբարշտութեանց մկրտեսցէ անկցի եպիսկոպոսութենէն, որպէս ծիծաղելով զխաչիւն և զմահուն Տեառն և ոչ ընտրէ քահանայն սուտ քահանայացեալն։

ՀԹ. — ՃԺԳ. Եթէ ոք եպիսկոպոս կամ երէց ըստ Աստուծոյ բարբառոյն ոչ մկրտեսցէ 'ի Հայր և Որդի և 'ի Սուրբ Հոգին, այլ յերիս հարս և երիս որդիս և յերիս հոգիս, անկցի 'ի քահանայութենէն։

Զ. — ՃԺԴ. Եպիսկոպոս կամ երէց որ ոչ երիս մկրտութիւնս միոյ սրբութեան կատարեսցէ, այլ 'ի մի մկրտութիւն որ 'ի մահն Տեառն տուաւ, անկցի 'ի քահանայութենէն, քանզի ոչ ասայ մեզ Տէր 'ի մահս իմ մկրտեցէք, այլ դնացէք աշակերտեցէք զնոսա յանուն Հաւր, և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ։ Բայց որ մկրտելոյն է ուսցի եթէ Հայր ոչ խաչեցաւ և ոչ ծնունդ կրեաց մարդոյ և ոչ Հոգին Սուրբ մարդ եղեւ և ոչ չարչարանս կրեաց, քանզի ոչ մարմնացաւ, բայց փրկիչն փրկեաց զաշխարհս 'ի վերայ հասեալ բարկութեան միածին Որդին, վասն զի մարմնացաւ իւրով մարդասիրութեամբն 'ի կուսէն մարմին ստեղծեալ, քանզի խմաստութեամբ չինեաց իւր տուն որպէս արարիչ, քանզի խաչի համբերեաց և ապրեցոյց զաշխարհս յանակնկալ բարկութենէն։ Արդ՝ մկրտեմք յանուն Հաւր, որպէս մարդ եղելոյ և չարչարելոյ, և յանուն Որդւոյ որպէս կրեցելոյ զծնունդն, որպէս համբերելոյ խաչի, որպէս մեռելոյ և յարուցելոյ։ Եւ յանուն Հոգւոյ Սրբոյ համադոյական Հաւր և Որդւոյ։ Իսկ որք ոչ այս մկրտեն՝ որպէս ոչ դիտելով ըստ խորհուրդ բարեպաշտութեան անկցին 'ի քահանայութենէն։

ՁԱ. — ՃԺԵ. Որ զՀայր ասէ չարչարեալ, ամբարիշտ է և ծանրադոյն քան զՀրէայսն ընդ Քրիստոսի և Հայր բեւեռելով, իսկ որ զՈրդին ուրանայ զմիածինն վասն մեր մարմնացաւ

եալ և խաչի համբերեալ, աստուածամարտ է և սրբոյն պա-
տերազմող։ Իսկ որ զՀոգին Սուրբ Հայր անուանէ կամ Որդի
ոգէտ և անմիտ է, քանզի Որդին արարչակից Հաւր և աթո-
ռակից և յաւրէնսդրակից և դատաւոր և յարութեան պատ-
ճառ։ Եւ Հոգին Սուրբ համագոյական աստուածութեան,
վասն զի առ միաւք Սիմոն կախարդ զդայռեաւ ձգելով ժո-
ղովրդեանն մոլար և անսասա և չար յինքն հոգի. և մի ե-
ռանուն գոլ լեզուանեցաւ զԱստուած։ Իսկ երբեմն գչարչա-
բանան Քրիստոսի և զծնունդն եհատ։ Արդ՝ դուք ով տեն-
ջալիք 'ի մի Հայր և Որդի և 'ի Սուրբ Հոգի երիցս մկրտեցէք
ըստ ցեռան կամայ և ըստ մերոյ հոգւոյն հրամանի։

ՁԲ. — ՃԺԶ. Եպիսկոպոս ոք թէ իցէ դաւառայ բաղմայ և
ունիցի իշխանութիւն ընդ ձեռամբ իւրով, մի՛ իշխեսցէ այլ
իշխանութեանց առնուլ և զմիւսոյ Եկեղեցին զարդարել, զի
աչառութեամբ վառեցաւ և անձին իւրում դատապարտու-
թիւն, այնպիսին թէ չհաւանեսցի դառնալ յիւրացն, 'ի բաց
լուծցի և այն զսրոյ առն և չինեաց զայլոյ Եկեղեցին, մի՛ կո-
չեսցեն զանուն նորա իւրեանց վարդապետ։

ՁԳ. — ՃԺԷ. Եպիսկոպոսքդ դէտ լինիցին գլխաւորք և հր-
ամանատարք 'ի վերայ երիցանց Եկեղեցւոյն, որք են 'ի
գիւղս և յագարակս, զի երեւեսցի գլուխ և առաջնորդ ա-
մենեցուն. զի 'ի ձեռն նորա խնդրեսցին ամենեքին, քանզի
և Սամուէլ այնպէս շրջէր 'ի տեղւոջէ 'ի տեղի և ոչինչ առ-
նոյր 'ի տանէ պաշտօնէիցն և ընչից նոցա և ոչ տրտմեցուցա-
նէր զնոսա, այլ այց առնէր և կարդայր և հրաման տայր։

ՁԴ. — ՃԺԸ. Զայսոսիկ յաղագս կանոնացայ ձեղ հրամայե-
ցաւ 'ի մէնջ իբրեւ զեպիսկոպոսաց, իսկ դուք կացեալ մնաց-
եա՛լ 'ի նոսա ապրեսջի՛ք և զխաղաղութիւն կալջի՛ք. իսկ ան-
հաւանեալքն ընդ տանջանաւք եղիցին և պատերազմեալք
ընդ միմեանս անվախճան կրիցէ՛ք զպատուհասն, վասն ոչ լսե-
լոյ ըստ արժանւոյն վասնզեալք, այժմ և միշտ և յաւիտեանս։

Շարունակելի։

ՀԷՆՐԻ ԹՕՄԱՍ ԲՕՔԼ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԱՆԳԼԻԱՈՒՄ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

ՄԱՐԿՈՍԻ ԱՂԱԲԷԳԵԱՆ

ԱՌ

ՀԱՐԱԶԱՏ ԵՒ ՊԱՏՈՒԱԿԱՆ

ԵՂԲԱՑՐ ԻՄ

ՍԱՐԳԻՍ ԱՂԱԲԷԳԵԱՆՑ

ՕՍՄԱՆԵԱՆ ՊԵՏՈՒԹԵԱՆ

ԵՐԿՐՈՐԴ ԿԱՐԳԻ ԵՐԿՐՈՐԴ ԱՍՏԻՃԱՆԻ ՊԱՇՏՕՆԱՒՈՐ

ԵՒ

ՏԵՐՈՒԹԵՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՅՆ ՕԳՆԱԿԱՆ

ԱՄԵՆԱԽՈՆԱՐՀ

ՆՈՒԷՐ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԱՆԿԼԻԱՒՈՒՄ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Հանդէս պատմական խուզարկութեանց առաջը բացուած աղբիւրների եւ ապացոյց մարդկային գործառնութեանց կանոնաւորութեան։ Այդ գործառնութիւնքը կառավարուած են մտաւորական եւ բնագիտական օրէնքներով. ուստի պէտք է քննել ու իմանալ այդ երկու կարգ օրէնքները. չկայ ու կարելի չէ պատմութիւն առանց բնական գիտութեան։

Մարդկային գիտութեանց ամեն կարեւոր ճիւղերէն՝ պատմութեանն է, որու վրայ ամենէն աւելի է գրուած, և այդ ճիւղն է գիտութեանց մէջ, որ մինչ ամենէն շատ ժողովրդային է եղած։ Եւ յիրաւի հասարակաց կարծիքն էլ, կարծես ընդունում է թէ պատմաբանների յաջողութիւնը, ամեն կողմէն, հաւասար է եղած իրանց դէդերողութեանց և թէ՝ պատմութիւնը որքան որ խորն է քննուած, այնքան էլ շատ լաւ է հասկացուած։

Այդ վստահութիւնը պատմութեան արժանաւորութեան վրայ, շատ լայնօրէն տարածուած է, ինչպէս տեսնում ենք այդ՝ ընթերցողների շատութենէն և ամեն ուղղութեամբ դասախարակութեանց՝ պատմութեան տուած կարեւորութենէն։ Ցայտնի է որ այդ վստահութիւնը մի քանի կերպ հայեցուածքով լիովին օրինաւոր է։ Չէ կարելի ուրանալ, որ պատմութեան համար հաւաքուած նիւթերն ամենքը մէկանց

չլինին մի թանկագին և ահագին հանք հարստութեան։ Եւրոպայ ամեն մեծ ազգերի քաղաքական և զինուորական տարեգրքերը և Եւրոպայէն դուրս եղող գրեթէ բոլոր ազգերի պատմութիւնքը խնամքով հաւաքուեցան, մի յարմարաւոր ձեւի բերուեցան և այն աղբիւրներն էլ, որոնց վրայ այս տարեգրքերը հիմնուած են եղել մեծ ճշդութեամբ քննուեցան։ Մի յատուկ մտադրութիւն տուուեցաւ օրէնքի և կրօնի պատմութեանց և շատ նշանաւոր աշխատութիւնք, թէ և ոչ այնքան բարձր նշանակութեամբ, նուիրուեցան հետամուտ լինելու գիտութեան, գրականութեան, դեղարուեստների, օգտակար գիւտերի յառաջադիմութեան և այս վերջին ժամանակներումս էլ, ազգերի բարքի, վարքի և կեանքի լաւութեան։ Եւ որպէս զի մեր տեղեկութիւնքն անցեալին վրայ աւելանայ, ամեն տեսակ հնութիւնքը քննուեցան, հին քաղաքների տեղական դրութիւնքը յայտնուեցան, նախնեաց դրամները դեռնի տակէն հանուեցան ու կարդացուեցան, արձանագրութիւնքն օրինակուեցան, այլուրէնք նորէն հաստատուեցան, նշանագրերը մեկնուեցան, երկար ժամանակէ հետէ մուռացած մի քանի լեզուներ նորէն շինուեցան և ձեւաւորուեցան։ Մարդկային խօսողութեան փոփոխութիւնը կանոնաւորող օրէնքներէն շատերը գտնուեցան ու բանասէրների ձեւին ազգերի առաջին դաղթականութեանց մթին ժամանակները լուսաւորելու օգնեցին։ Քաղաքական անտեսութիւնը մի գիտութիւն եղաւ և մեծ լոյս արձակեց հարստութեան այն անհաւասար բաշխումի վրայ, որ ընկերական թեան վրդովմունքների առատաբուխ աղբիւրն է։ Վիճակագրութիւնն այնքան մեծ եռանդով մշակուեցաւ, որով ոչ թէ միայն մարդկանց նիւթական շահերի վրայ ընդարձակ տեղեկութիւնք ենք ստացած, այլ և նրանց՝ իրանց յատուկ եղած բարոյական հանգամանքների վրայ անդամ. այն բանի վրայ օրինակի համար, որն որ կը վերաբերի այլևայլ յանցանքների թուոյն, այդ յանցանքների կամ մեղքերի ամեն մեկին մէջ գտնուած համեմատութեանը և իրանց վրայ ներգործող ազդեցութեանը՝ մարդուս հասակէն, սեռէն, դասակարգութենէն և նրա ուրիշ վիճակներէն։ Բնական աշխարհագրութիւնը հետամուտ եղաւ այդ մեծ շարժողու-

թեան. կլիմայական կամ օդային երեւոյթներն արձանագրուեցան, լեռները չափուեցան, գետերը մինչեւ իրանց ակունքը քննուեցան, որքան բնական բերքեր էլ որ կան ուշի ուշով զննուեցան և մինչեւ այսօր իրանց մէջ եղած թագուն յատկութիւնքը յայտնուեցան, մարդկային կեանքը պահպանող ամեն անուանդ բնալուծօրէն լուծուեցաւ և այդ անուանդն կազմող մասերը կարգի դրուեցան և մի առ մի զննուեցան և այդ կազմիչ մասանց ու մարդկային մարմնոյն մէջ եղած յարաբերութեան բնութիւնը շատ բանի մէջ բաւական ճանաչուեցաւ։ Մի և նոյն ժամանակ, որպէս զի ինչ որ հարկն է անել մեր ճանաչողութիւնը մեծացնելու համար այն դէպքերով, որոնք մարդուս վրայ են ներգործում, մանր բարակ զննութիւնք եղան ուրիշ դաւառների մէջ. այնպէս որ՝ ինչ որ կը պատկանի ամենէն քաղաքակիրթ ազգերին հիմա ճանաչում են նք, նրանց մէջ մեռածների, ամուսնացածների, ծնուածների ցանկը, նրանց գործերն ու զբաղմունքը և ոչ թէ միայն նրանց ստացած վարձքերի փոփոխութիւնը, այլ նաեւ նրանց կեցութեան համար պէտք եղած ուտելիքի գներին փոփոխուելն էլ։ Այդ իրերն ու շատ ուրիշներ էլ հաւաքուելով ձեւի դրուեցան և ամփոփուելով կարգի բերուեցան և հիմա էլ մեր ձեռին տակ ունինք այդ իրերը պատրաստ մեզ համար։ Այս յառաջ եկած արդիւնքը, թէ որ կարող ենք մեզ այսպէս հասկացունել, մի ազգի անդամաշնութիւնքն են կազմում և իրանց մանր մունր. բնութեամբը նշանաւոր են և այդ արդիւնքներին եկան միացան ուրիշներ էլ, որոնք թէ և ոչ այնքան մանրամասն, բայց աւելի ընդարձակ։ Ոչ թէ միայն մեծ ազգերի նշանաւոր գործերն ու խնդիրները արձանագրուեցան, այլ նաեւ աշխարհիս ամեն ծանօթ եղած կողմերը մարդիկ գնացին և այն տեղուանք գտնուած անհամար և այլ և այլ ցեղերը անտղեցին և նրանց նկարագիրն աբին, որով կարող ենք համեմատել մարդկային ցեղի վիճակն քաղաքակրթութեան ամեն կերպարանքով և ամեն պարագաների փոփոխութեանց մէջ։ Թէ որ հիմա մենք աւելացնենք թէ այս քննասիրութիւնը մեր նմանների վրայ ըստ երեւման անցագելի է և թէ միշտ աւելանալու վրայ է, և թէ այդ քննանելութիւնը զոհայնելու միջոցներն էլ նոյնպէս աւելա-

նում են և թէ որքան նկատողութիւն՝ որ եղել են մինչեւ այսօր հաւաքուել են. թէ որ մենք ասում եմ, բոլոր այդ բաները հաւաքենք, կարող էլ կը լինինք այն ժամանակ մի թեթեւ դաղափար ունենալ այդ իրերու այս ընդարձակ հաւաքումն անհուն արժանաւորութեան վրայ, որնոր հիմա մենք ունենք մեր ձեռին և որոնց օգնութեամբ մարդկային աղգի յառաջադիմութիւնը պէտք է որ քննուի ու ճանաչուի։

Բայց թէ որ, մի ուրիշ կողմէ, կամենանք պատմագրել այդ նիւթերի մինչ բանի համար դործածուիլը, պէտք է որ բոլորովին մի տարբեր կերպով նկարագրենք։ Մարդուս պատմութեան մէջ մի տարաբաղդ այլակերպութիւն կայ, այն է, որ՝ թէ եւ այդ պատմութեան այլ եւ այլ մասները քննուած լինին մեծ տաղանդով, ոչ մի պատմագիր փորձ չէ փորձած այդ այլեւայլ մասները ամենքն էլ մի ամբողջութեան մէջ ամփոփել և հաստատելով ցոյց տալ թէ ինչ կերպով այդ մասերն իրար հետ կը կապուին։ Ընդհանրապէս ընդունուած է իրերը հասարակայ անելու (généraliser) հարկաւորութիւնը ուսման ամեն կարեւոր դաշտերումը. և հիմա էլ մեծ ջանքեր է լինում մասնաւոր իրողութեանց մէջէն դուրս դալու այդ իրողութիւնքը կաւավարող օրէնքները դտնելու նպատակով։ Բայց պատմաբաններն այնքան հեռու են այդ օրինակին հետեւելու, որ մի տարօրինակ դաղափար, կարծես նրանց վրայ տիրում է. և այդ դաղափարն այն է՝ որ իրանց անելու բանն ուրիշ ոչինչ չէ, բայց միայն դէպքերը պատմել և կարող են էլ մի առիթ պատահելիս կենդանացուցանել և ղօրացուցանել անոնք բարոյական կամ քաղաքական խորհրդածութեամբ օդտակար լինելու կերպով։ Այս դրութեամբ, մի հեղինակ՝ որ իր խելքի անհոդութեամբ կամ իր բնական անկարողութեամբն անկարող է խօսել դիտութեան ամենէն բարձր ճիւղերի վրայ ուրիշ բան չունի անելու, բայց միայն մի քանի տարի բաւական դիրք կարդալ և այն ժամանակ բաւական է լինում մի պատմագիր լինել և մի մեծ աղդի պատմութիւնն էլ դրելու կարող և իր դործը պանիւ և նշանակութիւն է տանում այն տարակայի կողմանէ, որ նա մանրամասն էր դրած դրել։

Այս կարկամ նախատպի ընդունուիլը պատմագրի համար շատ վնասակար հետեւանքներ ունեցաւ մեր տեղեկութեանց

յառաջադիմութեան։ Եւ յիրաւի, պատմաբաններն ամենքը մէկանց առնելով՝ երբէք չճանաչեցին անձնատուր լինելու հարկաւորութիւնը պատրաստական ընդարձակ գիտութեանց և ուսմանց, որպէս զի կարող լինէին ըմբռնել իրանց նիւթն իր բոլոր բնական յարաբերութեանցը հետ միասին։ Եւ այս պէս, տեսնում ենք զարմանքով մի պատմագիր, որ խմանում չէ քաղաքական տնտեսագիտութիւնը, մի ուրիշն էլ՝ որ ճանաչում չէ օրէնքները, մի ուրիշ էլ էլի, որ եկեղեցական դրծերի և ոչ մի խօսքին է տեղեակ կամ թէ հասարակաց կարծիքին՝ մէկ կարծիքէն դէպի միւս կարծիք փոխանցմանը վերայ և մէկ ուրիշն էլ, որ անփոյթ է եղած վիճակագրական փիլիսոփայութեան վրայ և մի ուրիշ էլ վերջապէս զանց է արել բնական գիտութիւնքը. թէ եւ այդ նիւթերն ամենէն կարեւոր լինին այն մտքով կամ այն կողմանէ, որ պարունակում են իրանց մէջ այն գլխաւոր հանգամանքներն որոնցմով մարդկային ցեղի կազմուածքը և բնութիւնը ներգործուած են և որոնցմով էլ իրանք իրանց են յայտնում։ Այս կարեւոր աշխատութեանցմէ մի քանիսը յառաջ տարուելով մի մարդու ձեռքով, և մի քանիսն էլ մի ուրիշ մարդու, առանձին առանձին են եղած և ոչ թէ ամենքը միատեղ և ամփոփ. ուստի և այն օգնութիւնը ձեռք բերել նմանութենէ և բաղդատութենէ կորած է եղել և փորձ էլ փորձուել չէ այդ աշխատութիւնքն ամփոփել պատմութեան մէջ, որուն բուն իսկ և ի հարկէ կարեւոր կազմիչ մասերն են։

Ցասնութերորդ դարու սկիզբէն մի քանի մեծ մտածող մարդիկ, ճշմարիտ է, երեւան եկան, որոնք յաւելեան պատմութեան մէջ եղած փոքր յառաջադիմութեան վրայ և որոնք բոլորովին իրանց անձն էլ նուիրեցին մի դարման անելու պարտականութեան, բայց այդ օրինակները շատ քիչ եղան, այնքան քիչ, որ Եւրոպիոյ բոլոր դրականութեան մէջ երեք կամ չորս դործքէ աւելի չկայ, որ բուն իսկ մատենագրական լինի և որոնց մէջ ջանք եղած լինի մի կարդաւոր կերպով ուսումնասիրել (étudier) մարդուս պատմութիւնը այն եղանակներով՝ որոնք նիւթին դէպի բունը կը դիմեն և որոնք այնքան մեծ ծառայութիւն մատուցին գիտութեան միւս ճիւղերին և որոնք միմիայն կարող են բարձրացնել փորձա-

կան քննութիւնքը դիտական ճշմարտութեանց կարգումը։

Թէ որ պատմաբաններն ամենքը մէկանց վեր առնեն.ք, տասնուվեցերորդ դարէն յետոյ և մանաւանդ վերջին հարիւր տարուայ միջոցին, կը դտնեն.ք նրանց մէջ, դաղափարների աւելի մեծ հասկացողութեան՝ և իրանց դործերի մէջ այնպիսի նիւթեր խառնելու ցանկութեան նշաններ, որոնք՝ այդ նիւթերն անշուշտ դուրս կը թողէին մի ուրիշ յետամնաց ժամանակ։ Այս կերպով, նրանց ձեռքով դրուած նիւթերը աւելի փոփոխական եղան և ղուդակցիւռ իրերու պարզ միաւորութիւնը և իրանց հաղորդ դրութիւնը երբեմն թեղադիր եղան իրերն հասարակաց անելու կամ ընդհանրացուցանելու, որուն հետ.ն Եւրոպիոյ հին դրականութեան մէջ ամենեւին չնշմարուում։ Այդ բանումն է ի հարկէ մի անչափ յառաջադիմութիւն այն կողմանէ, որ պատմաբաններն ընտելացուց ընդարձակ համարձակութեան հետ և քաջալերեց մտածողութեան սովորութիւնը, որնոր թէ եւ ենթակայ է դէպի վատն դործածուելու, սակայն որ եւ է իսկական դիտակցութեան պայմանն է, վասն դի առանց անոր մարդ չէ կարող մի դիտութիւն շինել։

Սակայն, թէ եւ պատմական դրականութիւնն այսօր հեռուանց մի աւելի լաւ հայեցուած ունենայ, քան թէ նախընթաց դարերումը, պէտք է խոստովանիլ որ, դրեթէ ամենափոքր բացառութեամբ, պատմութիւնը դեռ եւս հեռուանց տեսնուած մի հայեցուածքէ, և թէ մինչեւ հիմա հաղիւ թէ մի քայլ առնուած լինի դէպի առաջ այն սկզբունքները դտնելու, որոնք աղդերի կերպարանքն ու ճակատագիրը կառավարում են, ես փորձ պիտի անեմ այս ներածութեան մի ուրիշ մասումը մի արժողութիւն տալ այն բանին որնոր ճշմարտապէս կատարուած է (1)։ Բայց հիմակուայ համար

(1) Մեր ժամանակուայ մի հեղինակ, որ չատերէն աւելի աշխատեց պատմութեան կարեւորութիւնը բարձրացուցանելու, արհամարհութեամբ է նկատում «իրերի անկապ ժողովածոյն՝ անպատշաճութեամբ պարմանեան կոչուելուն վրայ»։ Գոնդ, Դրական ֆիլիսոֆայութիւն Հտր. Ե. երես 18։ Շատ բան կայ այդ մեծ դործի եղանակին եւ եղրակացութեանց մէջ, որոնք կարող չեմ ընդունել, բայց անիրաւ կը լինի իր արտաքոյ արժանաւորութիւնն ուրանալ։ Ծան. Հեղ.

այս կասեմ միայն, որ պատմութիւնը դեռ ևս բոլորովին պակասաւոր ու թերակատար է, այն բանում, որ վերաբերում է մարդուս հանճարոյն բարձր տեսութեան և թէ մեր առաջն է հանում բնական խառնակութեան և անիշխանութեան այն տեսարանը մի առարկայի մասին, որուն օրէնքները անծանօթ են և որուն հիմունքն էլ դեռ հաստատուած չեն։

Մեր պատմական դիտութիւնքն այսքան թերակատար լինելով, երբ մեր նիւթերն այնքան շատ են, փափաքելի չէ՞ որ մինչեւ այսօր եղած փորձերէն մի աւելի մեծ աստիճանի վրայ փորձ լինի և աւելի եռանդով ջանք լինի բարձրացուցնել մարդկային խուզարկութեանց այս կարեւոր ճիւղը դէպ 'ի մի և նոյն կատարն ինչպէս միւսները, որպէս զի համակրաւորութիւնն ու դաշնաւորութիւնը պահպանուի մեր դիտութեանց մէջ։ Այս դաղափարն է ահա, որ յղացուց այս դործը։ Բայց այդ դործի դործադրութիւնը բոլորովին հաւասար անել յղացութեան, անհնարին բան է։ Սակայն ես յոյս ունիմ կատարել մարդուս պատմութեան համար մի բան, որ նոյն արժէքն կամ թէ դոնէ՝ համանման լինի այն բանին, որն որ կատարուած է ուրիշ խուզարկուներէ բնական դիտութեանց այլեւայլ ճիւղերի համար։ Բնութեան վերաբերող բաներում ըստ երեւութին ամենէն անկանոն և ամենէն այլանդակ դեպքերը մեկնուեցան և միանդամայն ցոյց էլ տուուեցան մեր աչքի առաջը, թէ միաբան են մի քանի հաստատուն և տիեզերական օրէնքների հետ։ Այս բանն եղաւ պատճառ, որ յաջողակ մարդիկ և ամենէն առաջ համբերող և անխոնջ մտածողներ բնական դէպքերը քննեցին անոնց անկանոնութիւնը դտնելու նպատակով. թէ որ մարդկային դէպքերն էլ ենթարկուած լինէին այդպիսի մի դարմանատարութեան, 'ի հարկէ իրաւունք կունենայինք մի և նոյն հետեւանքը ձեռք բերելու յուսալ։ Բայց իրօրէն, յայտնի է որ՝ նրանք, որ հաստատում են թէ պատմական իրերը ենթակայ չեն ընդհանրացողութեան, առաջուց՝ իրրեւ դատավճռած են նկատում այդ խնդիրը, որ բոլորովին ընդհակառակն է դտնուում բանը։ Իսկ դործքով, աւելին են անում, ոչ թէ միայն ընդունում են ինչ որ չեն կարող լինում ապացուցանել, այլ նաեւ այն բանն էլ որ սաստիկ անհաւանական է դիտու-

թեան այժմեան վիճակումը։ Ով որ մի փոքր տեղեակ է վերջին երկու դարերումն անց կացած իրերի վրայ, պէտք է դիտենայ, որ ամեն մի սերունդ ցոյց է տալի մեր աչքի առաջը այն հեշտ դուշակելի դէպքերի կանոնաւոր դարձը, որ նախորդ սերունդն անկանոն էր հրատարակած և բոլորովին որ և է դուշակութենէ դուրս. այնպէս որ զարգացողութեան մէջ դանուող լուսաւորութեան բացերու ուղղութիւնը ամփոփանել ու պնդացնել է մեր հաւատը կարգաւորութեան օրինականութեան և սովորութեան ամբողջութեան վրայ։ Մինանգամ, որ այս բանն ընդունուած է, հետեւում է, որ թէպէտ մի քանի իրեր կամ մի քանի կարգ իրեր դեռ կարգաւորութեան մէջ բերուած չեն եղել, մենք էլ պարտական էինք, փոխանակ ծանուցանելու թէ անհնարին են այդ իրերն իրանց առաջին վիճակին ածել, մեզ առաջնորդ անել մեր անցելոյն մէջ ունեցած փորձն և ընդունել հաւանականութիւնը՝ թէ այն բանն որ ասում ենք այսօր անմեկնելի, մեկնելի պիտի լինի ապագայումը։ Խառնախնդրութեան մէջ կանոնաւորութիւն դտնելու յոյսը այնքան բնական է գիտնական մարդկանց, որն որ հաւատոյ մի մաս է եղած ամենէն բարձր գիտնականների համար և թէպէտ այդ յոյսը դտնուում չէ առ հասարակ պատմաբանների մէջ, պէտք է այդ բանը տալ, մի մասով, որ դրանք ստորին են տաղանդով բնութեան խուզարկուներին և մի մասով էլ ընկերական երեւոյթների աւելի մեծ խառնափընթրութեան, որոնք իրանց ուսման նիւթն են կազմում։

Այս երկու պատճառներն ուշացուցին պատմական գիտութեան ստեղծումը, ամենէն հռչակաւոր պատմաբանները, յայտնի է, որ ստորին են բնական գիտութեան ամենէն հռչակաւոր քննիչներէն։ Իրանք իրանց պատմագիտութեան տուող մարդկանց մէջ, ոչ ոք չէ կարող իրան համեմատել իրրեւ խելք և իմացականութիւն կէրլէրին, Նեվտոնին և շատ ուրիշներին, որոնք կարող ենք յիշել այս տեղ (1)։ Իսկ երե-

(1) Ես նրանց մասին եմ միայն ակնարկութիւն անում, որոնք պատմութեամբ են զբաղած։ Բաղմնն էլ զբաղեցաւ պատմութեամբ, բայց միայն իբրեւ երկրորդական առարկայով, եւ յայտնի է որ պատմութիւնն երբէք նրան այնքան աշխատանք չնստեց, որքան իր միւս ուսմանց առարկաները։ Ծան. Հեղ.

ւոյթների աւելի մեծ խառնավնթորութեան մասին, իմաստասէր պատմաբանը կանգ է առնում շատ աւելի ահագին դժուարութեանց առաջը քան գրնութեան հետախոյզ եղողին պատահած դժուարութեանց առջեւ։ Վասն զի, երբ մի կողմէն իր նկատողութիւնքն աւելի ենթակայ են այն մարդութեան պատճառներին, որոնք առաջ են գալի կանխադատումէ և կրքէ, չէ կարող միւս կողմէն իրան ծառայացնել բնագիտութեան մեծ աղբիւրի փորձերը, որոնցմով կարելի է շատ անդամ պարզեցուցանել արտաքին աշխարհի ամենախառն խնդիրն անդամ։

Ուրեմն զարմանալի չէ, որ մարդուս շարժողութեան ուսումը դեռ իր երախայութեան մէջ լինի, բաղդատելով՝ բնութեան շարժողութեանց ուսման ձեռքով եղած անհուն յառաջադիմութեան հետ։ Այդ երկու ուսմանց ձեռքով կատարուած յառաջադիմութեանց մէջ իրապէս եղած զանազանութիւնն այնքան մեծ է, որ բնագիտական դէպքերի կանոնաւորութիւնը և անոնք դուշակելու կարելիութիւնը շատ անդամ իբրեւ ճշմարիտ և հաւատի ընդունուած են նաեւ այնպիսի պարագայներում, որոնց համար չկայ դեռ եւս ոչ մի փորձ, մինչդեռ պատմութեան համար այդ նոյն կանոնաւորութիւնը, փոխանակ ընդունուելու բոլորովին մերժուած է։ Այսոր համար է որ՝ ով որ կը ցանկայ բարձրացուցնել պատմութիւնը հաւասար մարդկային միւս գիտութեանց հետ, առաջ, մի արգելքի կը պատահի, իրաւ է, կասեն նրան՝ որ մարդկային գործերումը մի խորհրդաւոր և մի նախախնամական բան կայ, որ մեր հետախուզութիւնքն անհասանելի կանէ անոնց և մեզ միշտ կարգիլէ անոնց ապագայ ասպարէզը դտնելու։ Կարելի է պարզօրէն պատասխանել թէ այդ հաստատական յառաջադրութիւնը զուր և կամովի է և թէ իր բնութեամբն իսկ ենթակայ չէ փորձով էլ հաստատուելու և թերեւս մերժուած է այն նշանակելի իրով, որ ուրիշ տեղ, գիտութեան զարգացումն իրան հետ ունի նաեւ մի աճեցուն վստահութիւն միակերպութեան վրայ, որոյ հետ նոյն և մի հանգամանքներում, նոյն և մի դէպքերը պէտք են որ իրարու յաջորդեն։ Բայց աւելի դիւրալի և գոհացուցիչ է դըժուարութեան աւելի խորը քննել և հետախոյզ լինել անմիջա-

պէս թէ ո՞ն է այդ ընդհանուրի կարծիքի հիմունքը, որով կարծուում է թէ պատմութիւնը պէտք է միշտ մնայ նոյնևմի վատթար վիճակումը և կարող չլինի երբէք իր կարգը բռնել դիտութեանց մէջ։ Այս բանը մեզ կը տանի այն կարեւոր խնդրին, որ իսկ և իսկ առարկային բուն բնաբանն է։ Մարդկանց գործառնութիւնքն և հետեւաբար ընկերականութեանցը՝ հաստատուն օրէնքներով են կառավարուած, եթէ ոչ դիպուածին հետեւանքն են կամ թէ մի գերբնական միջնորդութեան։ Այդ երկուսէն մինն ընտրելու վիճաբանութիւնն մարդուս միտն է բերում մի քանի խիստ նշանաւոր և միանգամայն օգտակար խորհրդածութիւնք։ Եւ յիրաւի այս առարկայի մասին երկու վարդապետութիւն կայ, որ կարծես մեր առաջն են հանում լուսաւորութեան այլևայլ կերպարանքներ։ Ըստ առաջին վարդապետութեան, ամեն մի դէպք միայն է և առանձին (կղզու նման) և պարզապէս նկատուած է իբրեւ կոյր բախտի կամ դիպուածի հետեւանքը։ Այդ կարծիքը, որ շատ բնական է մի բոլորովին տգէտ ազգի համար, շուտով է փոփոխւում և չափաւորւում փորձերի դասերով, որ տալիս է իրերայաջորդութեան և գոյակցութեան միակերպութեանց ճանաչողութիւնը և որոնք բնութիւնը շարունակ մեր աչքին առաջն է հանում։

Վեր առնենք, օրինակի համար, լուսաւորութեան ամենաթեթեւ գոյնը չունեցող ու բոլորովին որսով և ձկնով ապրող թափառական ցեղեր։ Հաւատի ենք որ՝ այդ ցեղերն կարող են շատ լաւ ենթադրել թէ իրանց կեանքին հարկաւոր եղած մնունդին երեւոյթը, մի այնպիսի դէպքի հետեւանքն է, որ անհնարին է մեկնելն, պաշար պատրաստելու անկանոնութիւնը և այն երեւութական կամքը որ այդ պաշարը երբեմն առատ և երբեմն նուազ է անում, կարող են արգելք լինել այդ ցեղերին նշմարելու և կասկածելու ամենափոքր ուղղութիւն բնութեան կարգաւորութեան մէջ։ Այդ ցեղերը կարող անդամ չեն լինել իմանալ ընդհանուր սկզբունքների գոյութիւնը, որոնք դէպքերի կարգը կը կանոնաւորեն, այն սկզբունքներն, որոնց ճանաչողութիւնը շատ անգամ մեզ թոյլ կը տայ դուշակել այդ դէպքերի ապագայ ընթացքը։ Բայց, երբ այդ նոյն ցեղերը, լուսաւորութեան մէջ առա-

ՉԱՆԱԼՈՎ ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ՀԵՏ ԶԲԱՂԻԼ ԿԿԱՆԻՆ, ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ՄԻ ՍՈՒՆԴ ԳՈՐԾ ԿԱԾԵՆ, ՈՐՈՒՆ ՈՉ ՄԻԱՅՆ ԵՐԵՒՈՒՄԸ, ԱՅԼ ԵՒ ԳՈՅՈՒԹԻՒՆԸ ԱՆԳԱՄ, ԿԱՐԾԵՍ՝ ԻՐԱՆՑ ՍԵՊՀԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՆ ԱՐԴԻՒՆՔԸ ԼԻՆԻՆ։ ԻՆՉ ՈՐ ԿԸ ՑԱՆԵՆ ՆՈՅՆՊԷՍ ԿԸ ՀՆԱՁԵՆ ԵԼ։ ԻՐԱՆՑ ՊԷՏՔ ԵՂԱԾ ՊԱՇԱՐՆ ՈՒՐԵՄՆ ԻՐԱՆՑ ՅԱՏՈՒԿ ՔՆՆՈՂՈՒԹԵԱՆ ՏԱԿ ԿԸ ԳՏՆՈՒԻ ԵՒ ԻՐԱՆՑ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՆ ՀԵՏԵՒԱՆՔՆ ԱՒԵԼԻ ՀՕՇԱՓԵԼԻ ԿԵՐՊՈՎ Է. ԵՒ ԱՅԴՊԷՍՈՎ ԿԸ ԳՏՆԵՆ ՆՐԱՆՔ ԱՐԴԻՒՆՔԻ ԿԱՄ ՀԵՏԵՒԱՆՔԻ ՎՐԱՅ ՄԻ ՈՐՈՇ ՄԻՏՔ ԵՒ ՄԻ ԿԱՆՈՆԱՒՈՐ ՄԻԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ ԱՅՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ, ՈՐ ԵՐԿՐԻՆ ՄԷՋ ՑԱՆՈՒԱԾ ՀՈՒՆՏԻՆ ԵՒ ՀԱՍՈՒՆՈՒԹԵԱՆ ՀԱՍՆՈՂ ՅՈՐԵՆԻՆ ՄԷՋ ԿԱՅ։ ԱՅՆ ԺԱՄԱՆԱԿ ԿԱՐՈՂ ԵՆ ԱՅԴ ՅԵՂԵՐՆ ԱՊԱԳԱՅԻ ՎՐԱՅ ՄՆԱԾԵԼ, ՈՉԹԷ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՄԲ, ԱՅԼ ՇԱՏ ԱՒԵԼԻ ՄԵԾ ՎՍՏԱՀՈՒԹԵԱՄԲ ԱՅՆ ՎՍՏԱՀՈՒԹԵՆԷՆ, ՈՐՈՆՔ ԿՏՐՈՂ ԷԻՆ ՓՈՐՁՆ ԱՌՆԵԼ ԻՐԱՆՑ ԱՌԱՋՈՒԱՅ ԵՒ ԱՒԵԼԻ ԱՆՀԱՍՏԱՏ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՆՑ ՄԷՋ (1)։ ԱՅԴ ԲԱՆԷՆ ԾՆՈՒՄ Է ՄԻ ՄԻՆԻ ԳԱՂԱՓԱՐ ԴԷՊՔԵՐԻ ՏԵՒԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ, ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ՄԱՐԴՈՒՍ ԽԵԼՔԸ ԿԿԱՆԻ ՄԻ ՓՈՔՐ ԻՄԱՆԱԼ ԱՅՆ ՈՐ ՅԵՏՈՅ ԼԻՆՈՒՄ Է ԸՆՈՒԹԵԱՆ ՕՐԷՆՔ։ ԱՄԵՆ ՄԻ ՆՈՐ ՔԱՅԼ ԶԱՐԳԱՑՈՂՈՒԹԵԱՆ ՃԱՄՊՈՒՄԸ ԱՅԴ ՄԻՏՔԸ ԱՒԵԼԻ ԿԸ ԼՈՒՍԱՒՈՐԷ. ՔԱՆԻ ՈՐ ՔՆՆՈՒԹԻՒՆՔՆ ՈՒ ՁՆՆՈՂՈՒԹԻՒՆՔԸ ՇԱՏԱՆՈՒՄ ԵՆ, ՔԱՆԻ ՈՐ ՓՈՐՁՆ ՏԱՐԱԾՈՒՄ Է ԱՒԵԼԻ ԸՆԴԱՐՁԱԿ ՇՐՋԱՆԻ ՎՐԱՅ, ՄԻԱԿ ԻՐՈՂՈՒԹԵԱՆ Է ՊԱՏԱՀՈՒՄ ՄԱՐԴՆ, ՈՐՈՒ ԳՈՅՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ ԵՐԲԷՔ ԿԱՍԿԱԾ ԵՂԱԾ ՉԷՐ ԵՒ ՈՐՈՒՆ ՅԱՅՏՆՈՒԻԼԸ ԿԸ ՏԿԱՐԱՑՈՒՆԷ ԴԻՊՈՒԱԾԻ ԱՅՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ ՈՐ ԱՌԱՋԻՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆՆ ԷՐ ԵՂԱԾ, ՄԻ ՔԱՅԼ ԵՒՍ ԴԷՊԻ ԱՌԱՋ ԴՈՒՐՍ ԿԸ ԳԱՅ ՎԵՐԱՑԱԿԱՆ ՄՈՌԱԽՈՐՀՈՒԹԵԱՆ ՃԱՇԱԿԸ։ ՅԵՏՈՅ ՄԻ ՔԱՆԻ ՄԱՐԴԻԿ ԿԸՆԴՀԱՆՐԱՑՈՒՆԵՆ ԵՂԱԾ ՔՆՆՈՂՈՒԹԻՒՆՔԸ ԵՒ ԺՈՂՈՎԸՐԴԱՅԻՆ ՀԻՆ ԿԱՐԾԻՔՆ ԱՐՀԱՄԱՐՀԵԼՈՎ, ԿԸ ՃԱՆԱՉԵՆ ՈՐ ԱՄԵՆ ԴԷՊՔ ԻՐ ՆԱԽՈՐԴԻՆ ՀԵՏ ԿԱՊ ՈՒՆԻ ԱՆՔԱՆԴԵԼԻ ՅԱՐԱ-

(1) ԻՐ ՕՐԷՆՔԻՊԱԿԱՆ ԳԻՐՈՒԱԾՔՈՒՄԸ, ՀԱՏ. Ե. ԵՐԵՍ 275—275. Պ. ՇԱՐԼ ԳՈՆՍ ՆԿԱՏՈՒՄ Է ԲԱՐՈՅԱԿԱՆ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԻ ՄԻ ՔԱՆԻՍԻ ՎՐԱՅ, ՈՐՈՆՔ ԱՌԱՋ ԵՆ ԳԱԼԻ ԱՅՆ ՊԱԿԱՍՈՒԹԵՆԷՆ, ՈՐՆ ՈՐ ԿԱՅ ՍՈՒՆԴՆԵՐԻ ԱՆՍՏՈՒԳՈՒԹԵԱՆ ՄԷՋ։ ԲԱՂԴԱՏԻՐ ՄԻԼԼ, ՊԱՊՈՒԹԻՆ ՀՆԴԿԱՑ ԱՇԽԱՐՀԻ ՀԱՏ. Ա. ԵՐԵՍ 180—181։ ԲԱՅՑ ԱՅԴ ԵՐԿՈՒ ՃԱՐՏԱՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐՆ ՄՈՌԱՑԱԾ ԵՆ ՆԿԱՏԵԼՈՒ, ՈՐ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆԸ ՀԵՂԻՆԱՑՆՈՒՄ Է ԷՐԵՒՈՅԹՆԵՐԻ ԿԱՆՈՆԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՃԱՆԱՉՈՂՈՒԹԻՒՆԸ։ Ծ.Ն. ՀԷՔ

բերութեամբ և թէ այդ նախորդն էլ իր կողմէն իրմէ առաջ անցկացող դէպքի հետ և թէ՝ հետեւապէս ամբողջ աշխարհը մի ստիպովի կամ անհրաժեշտ շղթայ է կազմում, որում ամեն մարդ կարող է ի հարկէ իր պաշտօնը վարել, բայց առանց կարող լինելու ոչ մի կերպով որոշել ինչ որ պիտի լինի այդ պաշտօնը։

Ահա այսպէս է, որ ընկերականութեան հասարակ ընթացքումը, բնութեան կանոնաւորութեան մի աճեցուն ճանաչողութիւն բաղդի վարդապետութիւնը կոչնչացունէ և ստիպովի յարաբերութեան կամ թէ անհրաժեշտ հաղորդութեան վարդապետութիւնն անոր տեղը կը դնէ։ Շատ հաւանական է, ըստ ինձ, որ այդ երկու վարդապետութեանցմէ, բաղդի և ստիպովի պարտաւորութեան, դուրս եկած լինին յետոյ անձնիշխանութեան և նախասահմանութեան վարդապետութիւնքը։ Ոչ էլ դժուարին է հասկանալը այն կերպն որով այդ կերպարանափոխութիւնը տեղի է ունեցել ընկերականութեան աւելի առաջացած մի վիճակումը։ Ամեն երկրումը հէնց միանգամ որ հարստութեանց հաւաքումը կամ դիզուելը հանում է մի որոշ աստիճանի, ամեն մի մարդու աշխատութեան արդիւնքը բաւականէն աւելի է գալի իր յատուկ պէտքին համար։ Ուրեմն էլ հարկ չկայ, որ ամեն մարդ աշխատի, և առանձին մի կարգ մարդիկ է կազմուում, որոյ անդամների մեծ մասը նուիրում են իրանց կեանքը հաճութեանց, մի քանիսն էլ գիտութեանց լոյսն ստանալու և տարածելու։ Այս վերջիններումը դանուում են միշտ մի քանի մարդիկ, որոնք արտաքին դէպքերի վրայ անհոգ լինելով, դարձնում են իրանց ուշադրութիւնն իրանց յատուկ իմացականութեան ուսման վրայ (1) և սրանք են, որ երբ բարձրագոյն տաղանդներ են

(1) Այս ուսման՝ այսինքն մարդս, իր իմացականութիւնը քննելու և սորվելու ուսման՝ և հարստութեան առաջուց առաջ գալու մէջ եղած կապակցութեան համար, տես Տէննման Պոպոնիէն ֆիլոսոֆայոնիան Հար. Ա. երես 50։ Մտաւորական մշակութիւնը և ընկերական դիւրակեցութիւնը մինչեւ մի աստիճան որ հասնում է՝ փիլիսոփայական իմացողութեան զարգացման համար մի ամենակարեւոր հանգամանք է լինում։ Որքան որ մարդս իր կենացը միջոցներով իր մարմնաւոր պիտոյքը յագեցնելու է զբաղած, այնքան ծանր առաջ է գնում նրա իմացական կարողութեան զարգացումն ու կազմութիւնը և կարող չէ լինում մտանենալ մի ազատ իմաստասիրու-

ձեռք բերում, փիլիսոփայութեանց և նոր կրօնների հիմնադիրներ են լինում, որոնք շատ անգամ այդ փիլիսոփայութիւնքն ու կրօնները ընդունող ժողովրդին վրայ մի անսահման ազդեցութիւն են վարում։ Բայց այդ ուղղութեանց հեղինակներն իրանք անգամ ներդործուած են իրանց ապրած դարու բնաւորութենէն։ Ոչ ոք չէ կարող փախչիլ կարծիքների ներդործութենէն, որոնք իրան բոլորտիքն են բռնած, փիլիսոփայութիւն կամ մի նոր կրօն կոչուածն էլ առհասարակ նոր դաղափարներու մի ստեղծողութիւն չէ, այլ մի նոր ուղղութիւն տուուած՝ այն դաղափարներին, որոնք արդէն այն ժամանակուայ մտածողների մէջ յարդ են ունեցած (1)։

թեան . . . ։ Ուստի փորձով հաստատուած է թէ՝ այն ազդերն որոնք խմաստասիրելու են սկսել, ընկերական դիւրակեցութեան եւ մտաւորական մշակութեան մի կարեւոր աստիճանին հասած են։ Նոյնպէս ես էլ փորձ պիտի փորձեմ յետադայ դլուխներումը ցոյց տալ բնական երեւոյթների անսահման կարեւորութիւնը, որոնք շատ անգամ բնաղանցական երեւոյթներէն առաջ են դալի ու համեմատւում։ Յունաստանի բարոյական պատմութեան մէջ որոշ կերպով կարելի է հետամուտ լինել բնական քննողութեանց դէպ 'ի բնաղանցական քննողութեանց անց կենալը։ Տես Կրօտ Պապոռ-Ինի Յունասպանի Հար. Դ. երես 549—1847 ին տպուած։ Բրուսսէ, Բիշլան վերդապետորենեանց փենոզոնենանց մէջ, Հար. Ա. երես 53—54 նշանաւոր դործ՝ բայց միմիայն խնդրին մի կողմն նկատող, նկատում է որ հիւղէական վարդապետութիւնը բախտի հետն ունեցած առընչութեան մէջ Պղատոնի վարդապետութեան բնական կարապետն եղած է։ Բաղդատիր հիւղէականների բախտի մասին, Բիտաէր Պապոռ-Ինի նախնի փիլիսոփայորենեան Հար. Ա. երես 555, մի կարծիք, ինչպէս ասում է Բիտաէր Կորձանիչ որ Ի զբոռենեան, հետեւաբար ուղղակի հակառակ այն հոդեբանական կարծիքին, որ յետոյ բոլորովին անոր տեղը բռնեց։ Ինչպէս եւ Դիոգինէս Լաէրտիոս վկայում է թէ բնական խուզարկութիւնք առաջուց կային։ Փիլիսոփայութիւն երեք մասն ունի, բնական, բարոյական եւ տրամաբանական։ Բնականն է, նիւթական աշխարհինը, բարոյականն է մեր կենաց վերաբերածը, իսկ տրամաբանականն է խօսելունը եւ խորհելունը։ Արքեղայոսն է հիմնադիր բնական փիլիսոփայութեան, Սոկրատն է բարոյական եւ Էլլատայի Զէնոնն էլ տրամաբանական։ Կեանք փիլիսոփայնէրի Հար. Ա. երես 12։ Բաղդատիր դիրք Բ. Հար. Ա. երես 9։

(1) Բոսօրը մի քանի ընտիր նկատողութիւնք է անում այս առարկայի մասին իր դիտական դործումը։ Բանոֆենական պապոռենեան Մանիֆէնի վրայ, Հար. Ա. երես 179, որու մէջ ասում է թէ կրօնական նախնի մեծ հերետիկոսութիւնքը փիլիսոփայութեանց վրայ են

Ա.յսպէս, այս դէպքին մէջ, որու վրայ է մեր խօսքը, բաղդի վարդապետութիւնն արտաքին աշխարհի մէջ, յարմար է գալի անձնիշխանութեան վարդապետութեանը՝ ներքին աշխարհի մէջ, ինչպէս որ, միւս վարդապետութիւնը պարտաւորական յարաբերութեան կամ թէ ստիպողական հաղորդութեան, համանման է նախասահմանութեան վարդապետութեանը, միակ զանազանութիւնն այն է, որ առաջինը բնաղանց փիլիսոփային մեկնութիւնն է և երկրորդն աստուածաբանին։ Առաջին դէպքին մէջ, բնաղանց փիլիսոփայն՝ բաղդի վարդապետութիւն էական մասն անելով բերում է մարդուս խելքի ուսմանը մէջ ինքնակամայական և անպատասխանատուութեան սկզբունքը, որ փոխադրելով մի նոր դեռնի վրայ անձնիշխանութիւնն է լինում, այս զրուցուածքը կարծես որ եւ է դժուարութիւն մի դէնն է առնում, վասն զի կատարեալ աղատութիւնն ինքն իրան սկզբնապատճառ ամեն գործառնութեանց, ոչ մի գործառնութենէ պատճառուած չէ, այլ կայ, ինչպէս բաղդի վարդապետութիւնը մի վճռական իր է որ ոչ մի ուրիշ բացատրութիւն չընդունիր (1)։ Երկրորդ դէպքի մէջ աստուածաբանը, վեր առնելով պարտադրական առնչութեան վարդապետութիւնը նորէն կը ձուլէ այն մի կրօնական կաղապարում և իր խելքն արդէն լիքը լինելով կարգաւորութեան և միակերպութեան դաղափարներով, տալիս է բնականաբար այդ հաստատուն կանոնաւորութիւնը վերին զօրութեան կանխադիտութեան և այս կերպով միայն

հիմնուած։ Յայտնի է որ կարծիքների պատմութիւնն ճանաչողներն երբէք պիտի չընդունին Պ. Ստահլի յանդուգն առաջադրութիւնն թէ «մի ազգի փիլիսոփայութիւնն իր արմատն իր աստուածաբանութեան մէջն ունի»։ Կլիմրաթ, Աշխատութիւն։ Հատ. Բ. երես 454, Պարիզ տպուած 1845։

(1) Ուստի եւ այն կոմքն, որու սկզբունքներն օրէնսդրական ձեւ ունին կարող է միայն իրրեւ օրէնք ծառայել եւ ազատ կամք լինել։ «Բանաքննութիւն գործնական բանականութեան դործ Կանտի, Հատ. Դ. երես 128» իրան համար յատուկ մի որոշ պատճառ չունի, բնաղանցութիւն բարոց Հատ. Ե. երես 12։ «Պատճառի բացարձակ պատճառականութեան»։ Բանաքննութիւն յատակ բանի վրայ Հատ. Բ. երես 539։ Տես նաեւ Պատրատութիւն ուշն ոչ ապատայ բնաղանցութեան Հատ. Դ. երես 268։

մի՝ Աստուծոյ փառաւոր ծանօթութեան, դալիս է և միանում այն վարդապետութիւնը թէ՝ այդ աստուծմէ ամենեան սկզբանէ անտի առաջացուց սահմանուած է որոշուած է և կանոնաւորուած։

Այս երերադէմ վարդապետութիւնքը, անձնիշխանութեան և նախասահմանութեան (1) նպաստում են անտարակոյս, և առաջ բերում մի պարզ և անվտանգ լուծումն մերէութեան խորհրդներին համար և ինչպէս որ այդ խորհուրդները հեշտութեամբ հասկացուած են, այդ վարդապետութիւնքն այնքան լաւ են յարմարում մարդկային իմացականութեան չափաւոր կարողութեան, որ այսօր էլ մարդկանց ամենամեծ առաւելութիւնը այդ վարդապետութեանց մէջ բաժանուած են, և ադոնք ոչ թէ միայն խանգարած են մեր ճանաչողութեանց ակունքը, այլ նաեւ առաջ են բերած կրոնական ալանդներ, որոնց երերադէմ ատելութիւնն ընկերականութեան մէջ վրդովմունք ձգեցին և խիստ շատ անդամ

(1) Ընդունելի կը լինէր առ հասարակ այդ վարդապետութիւնքը երբ մի եւ նոյն կերպով լինէին ճարուած ինչպէս որ բանադատութեան հասարակ եղանակները, բայց ոչ թէ միայն մինը միւսին հակառակ են, այլ իրար էլ չեն ընդունում. թէ որ միմիայն մի ցանկութեան համար չլինէր, որն որ զգալի է ամենքին, այն է՝ պահպանել այս ամեն մի վարդապետութեանց մի քանի մասերը։ Ցիրաւի՝ մտածւում է թէ՝ վանդաւոր կը լինէր անձնիշխանութիւնն ուրանալ, վախենալով թէ բարոյական պատասխանատուութիւնը կը տրկարանայ, նմանապէս վտանգաւոր նախասահմանութիւնն էլ մերժել, վախենալով թէ Աստուծոյ ամենակարողութեան դէմ եղած կը լինի։ Հետեւաբար այլեւայլ փորձ եւ ջանք եղան ազատութիւնը պարտաւորութեան հետ հաշտեցնելու եւ մարդուս ազատութիւն աստուածային կանխագիտութեան հետ միաբանելու։ Բաղդատիր այս բանի համար Լոգկի-մի նշանաւոր նամակը Մօլինէօին ուղղուած։ Գործ. Լոգկի Հար. Ը. երես 305. եւ ընծայութիւնն էլ պաշտպանուած Բէնալէյի նամակների մէկին մէջ. Մանք Բենդէյի կեանքը Հար. Բ. երես 7—8. նոյնպէս Բիտէր Պատմութիւն նախնի քրիստոնեայ Հար. Դ. երես 301—304։ Գօրլէստոն, Հեղինակութիւն հարանորութեան և նախասահմանութեան վերաբերեալ երես 6, 7, 46, 69, 70, 85, 92, 108, 156։ Մօղհէմ Պատմութիւն եկեղեցական Հար. Ա. երես 207։ Հար. Բ. երես 96։ Նէֆնաէր Պատմութիւն եկեղեցոյ Հար. Դ. երես 294, 589—591։ Եպիսկոպոս Լինքօլնի Տերտուղիանոսի վրայ, 1845, երես 525։ Հոգկղն Բուսական-ութեան վրայ Ասիական ընկերութեան իրաւանքներին մէջ Հար. Բ. երես 252։

էլ առանձնակի կեանքին յարաբերութեանց մէջ։ Եւրոպայի մնացածներին մէջ ամենէն առաջացածներին սակայն՝ մի աճեցուն կարծիք կայ, որ այդ երկու վարդապետութիւնքը սուտ են ու կեղծ կամ ինչ որ էլ լինի, բաւական ապացոյց չունինք իրանց ճշմարտութեանը մասին։ Եւ ինչպէս որ այդ մի ամենավսեմ կարեւորութեամբ խնդիր է, հարկ է որ, աւելի հեռուն չդնացած լուսաւորել որքան որ մեզ կը ներեն անքակտելի կերպով իրար հետ կցուած դժուարութիւնքն այդպիսի առարկաներին։

Շարունակելի։

ԲԱՆԱՔՆՆԱԿԱՆ

ՍԱՐԳԻՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԹԷՈԴՈՐԵԱՆ ԲԱՂԻՇԵՑԻՆ

ԵՒ ԻՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

ՄՈՒՐԱՏԵԱՆ, ՀԱՅԿԱԶԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԱՅ

ԵՒ ՄԻԹԱՐԵԱՆ ԱԲԲԱՅԻՑ

Թէոդորեան Սարգիս վարդապետն այս յետագայ խօսքով վերջ է տուած՝ իր Մուրատեան և Հայկազեան վարժարանաց պատմութեան, Մխիթարեան Աբբայից պատմութեան աւարտին։

«Ահա՛ բովանդակութիւն պատմութեան Մուրատեան և Հայկազեան վարժարանաց, և դիտաւորութիւն կամաց և որպիսութիւն մտաց հեղինակի նոցին, և ահա՛ լրումն վերջին պարտուց իւրոց . . . . Դատեսցին վերծանողք որպէս և կամիցին, չէ ինչ փոյթ նմա, զի ուղիղ դատաւոր զնատուած միայն գիտէ նա, և յիրաւունս նորին և եթէ յուսայ» (1)։

Սակայն այդ գիրքն ո՞ւմ համար է գրուած։ Աստուծոյ համար, որ ամենքին սրտի խորը կը կարդայ և պէտք չունի ընդունց գրքերէն, եթէ ոչ մարդկանց՝ որոնք ճանաչելով ճշմարտութիւնն այդ գրքի ընթերցանութեամբ, մի դատաստան անեն, որքան որ մարդիկ կարող են անել արժանաւոր մարդկանց արժանաւոր գործառնութեանց վրայ։ Կարծենք, Թէոդորեան Սարգիս վարդապետն որքան իրաւամբ իր գիրքն Աստուծոյ ուղիղ դատաստանին վճռոյն թողած լինի և ընթերցողների դատողութիւնն իրան փոյթ չլինի, չկամենալ, որ այն աղդն որոյ համար հրատարակած է իր գիրքը, մի սաւը հայեցուածք դարձունէ անոր վրայ և ամենեւին զգոյշն չլինի իր միջումը ծնած մի մեծ մարդու արժանաւորութեանը։

(1) Տես Հար. Դ. երես 621։

Ահա այս պատճառով մենք էլ, որքան մեր, մարդկանց մը-տածմունքին, վարմունքին, ասմունքին և գործքին ուղիղ դատաւոր միմիայն Աստուծոյն ճանաչում լինինք, բայց և այն-պէս նոյն Աստուծոյն մեզ շնորհած բանականութեամբը, կար-ծենք կոչուած լինինք դատել իր արարածին, այսինքն մարդ-ուն միտքը, վարքն ու գործքը և ճանաչել անոնց մէջ ճշմարիտը, բարին ու դեղեցիկը, որ է միմիայն աստուածային գործ։

Բայց դեռ այս առարկային մէջ չմնաց՝ մի բան կայ, որ մեզ կանգ առնել կը տայ։ Մենք մի հարց ունինք մեզմէ առնելու, այն հարցն որն որ ընթերցողն անպատճառ ինքն իրան պէտք է անէ մեզմէ. թէ ով ենք մենք, ի՞նչ մարդ ենք, ո՞ր տեղ ենք կանգնած և ի՞նչ դրութեան մէջն ենք, որ Թէոդորեան Սարգիս վարդապետին իր գրքովն ու գործքովն և այն մարդկանցմովը, որոնց հետ նա գործ է ունեցել՝ մենք մեր բանաքննութեան տակովն ենք դնում։ Այդ հարցը շատ խրատացի է, ում կողմէ որ լինի մեզ. ուստի և մեզ էլ հարկ է որ այս տեղ իմաց անենք մեզ այդ հարցն անողին թէ՝ մենք Հայ մարդ ենք, Հայոց ազգային և եկեղեցական պատմութեան պատկանող, թէ և արդեան Հայոց ընկերականութեան ծը-նունդ. մեր տեղն է այն տեղ, ուր Հայք կան և մեր տեսակ են, թէ և բնակուում լինին Պոլիս, Կայսրիա, Փարիզ, Ռեսը-բուրկ, Երևան, Դէհրան, Վան, Նիու Եօրք և այլն։ Իսկ մեր դրութիւնը, այդ է մի փոքր նուրբն ու քնքոյշը, մանա-ւանդ Թէոդորեան Սարգիս վարդապետին նկատմամբ, վասն զի նա է մեր հայրն ու հոգատարն ազգային ուսումն և կրթութիւն ստանալուն (1) և ոչ Մխիթարեանք. պատճառ, որ

(1) Երբ 1843 ի սկիզբները Փարիզ, Եգիպտական վարժարանի վերատեսուչ Ստեփան Բէգի յանձնարարութեամբ առաջն եկայ Թէոդորեան Սարգիս վարդապետին, որ Բիբլիոթեքի հրապարակումը մի տան բարձրայարկին էր բնակում, Մուրատեան վարժարանի աշակերտ ընդունելու, որ դեռ բացուած չէր. Սարգիս վարդապետն ինձ հարցուց, թէ ինչ եմ կամենում սորվիլ. պատասխանեցի թէ՝ Հայոց լեզու, Հայոց պատմութիւն եւ պատկերհանութեան հարկ եղած ուսումունքները, որոնց մէջ քիչ շատ աշխատել եմ. — Ուրեմն պատկերհանն սիրե՞ս լինիս. — Հրամեր էք ասացի. — Շատ աղէկ, ասաց, այն պայմանով կ'ընդունիմ քեզ մեզ աշակերտ, որ պատկերհանութիւն

Սարգիս վարդապետը նրանցմէ չէ եղած, չէ եղել և չէ մինչ այսօր թէ հոգւով թէ մտքով և թէ գործքով միանգամայն, թէ որ բուն իսկը նկատենք իր գրքին հոգուն մէջ, այլ միայն պաշտօնով և անունով։ Այս մեր ասմունքէն կը հետեւի, որ մի վոքր մարդ մի մեծ մարդ պիտի դատէ. կամ թէ որդին իր հայրը պիտի քննէ. այս բանս 'ի հարկէ մի ներելի երեւոյթ չի ունենար. մարդկանց կարծիքը կը խորշի այսպիսի դատաստան տեսնելէ և լսելէ։ Բայց միթէ պէտք չէ՞, մի անց կացած սերունդ՝ յետնէն եկող սերունդին դատաստանին տակովն ընկնի, որովհետեւ առաջնէն է սերուած և հետեւաբար նա սրան կեանք է տուած։ Ո՞ր կ'երթար լուսաւոր աշխարհիս բանը, եթէ իր նախորդ սերունդը քննելու և դատելու կարողութիւն չունենար. ուստի և մեր գրուածքը նրանց համար է որ այս վերջին հայեցուածքն ունին և ոչ նրանց՝ որ մի բան իր երեւոյթէն կը դատեն. այդպիսի անձինք կարող են իսկի չկարդալ մեր բանաքննական գրուածքը։

Թէոդորեան Սարգիս վարդապետն ամբողջ իր գրուածքում և իր գործքումը ցոյց կըտայ իրան ոչ մի կուսակցութեան պատկանող Հայոց մէջ, բայց միայն նոյն ազգի բարոյական լուսաւորութեան ծառայողներին և դրանց մէջ էլ իր ամենամեծ ջանքն անող առաջինը լինելու այս դարումն, ոչ թէ խօսքով այլ գործքով։ Իր այս հայեցուածքն այնքան տըպաւորուած է իր մտքումը, որ իր ազգաշինական գործքերին սկզբունք և դիմելու նպատակին էլ պատուանդան է արել։ Այս ղղացմունքը նրա սրտին մէջ այնքան սնանում է ու զարգանում, որքան որ ինքն էլ մեծանում, աշխարհ է տեսնում

սորվելէն յետոյ, գնաս Հայաստան, եթէ ոչ պալատներն ու բերդերը նկարես, գոնէ աւերակներն ու վանքերը եւ սքանչելի դաշտերը. — Աստուծով հայր սուրբ. — Ապրիս որդիս, ասաց եւ մեզ ընդունեց —։ Արդ՝ հրապարակում երախտագէտ եւ շնորհակալ լինելուց յետոյ Թէոդորեան Սարգիս վարդապետին, մեր գծրու Սահակ Պարթեւին, իմ ազգային ուսում եւ կրթութիւն ստանալուս համար նրա շնորհիւը, կը մաղթեմ Աստուծմէ, ինչպէս իմ միակ սրդուն, նոյնպէս բոլոր Հայոց զաւակներին նրա նման մի հայր հոգատար ունենան իրանց ազգային դաստիարակութեան համար։ Վասն զի ապամայի երկրայում եմ եւ վախենում, որ Հայոց ազգը, էլ Սարգիս վարդապետներ կամ պիտի չունենայ կամ թէ որ ունենայ էլ սքանչելիք պէտք է լինի այդ։

և մեծամեծ գործերումն է մշուռմ։ Այս իսկ է, ըստ ինձ, Թէոդորեան Սարգիս վարդապետի մեծամարդութեան առաջին կնիքը՝ որն որ գրոշմուած է իր ամեն գործքին և խօսքին վրայ։

Իր պատմութեան սկզբումը կասէ Սարգիս վարդապետը։ „Եւ առաւելապէս զնուիրումն անձինս 'ի լուսաւորութիւն „աղղին մերոյ կարօտելոյ, յիշելով միշտ զարտասուչ զայս „բանս Ներսիսի Շնորհալւոյ թէ՝ Քանզի ոչ մեր վարժա„բանք 'ի թագաւորական պատրաստեալ հրամանաց և կամ „յոյս վառայ և պարգեւաց յառաջայելոյն յիմաստս, որ մա„նաւանդ մանկաբարոյիցն են առաւելագունի պատճառ փու„թոյ կրթութեան „։

Մի փոքր առաջ էլ նոյն տեղերը „Թէպէտ և այսպիսի „կեանք և յայնմ հասակիս ծանր էր ինձ, այլ թեթեւ եղեն „յաչս իմ. վասն սիրոյ մեր բնիկ լեզուին, յորմէ ծնանի և սեր „ազգին „։

Իսկ երբ կասէ նոյն տեղ նորէն „Ի հրահանգս Աստուա„ծարանութեան 'ի ներբաժանութեան նորին, որ աշխատասի„րութիւն էր հայր Մկրտիչ Աւգերեանի խելամուտ եղէ ես „բաղում ինչ ճշմարտութեան. քանզի յառաջ բերեալ և ա„նաչառ քննեալ նորա անդ զարարողութիւն Յայն և Լաստին ե„կեղեցեաց հնագոյն և անվսիսոյ արարողութիւն զՀայաստան„եայց Եկեղեցւոյ համարի։ Իսկ 'ի հանդանակս հաւատոյ ոչ „ինչ զանազանութիւն գտանէ նա. և զայս աստուածաբանու„թիւն ուստ ցանէր մեզ վարժապետն մեր հրամանաւ Դեր. Աբ„բային։ Ցեսեալ իմ յայն զայս ամենայն՝ խորհրդածէի և զար„մանայի յոյժ 'ի միտս իմ. զի ճանաչելով Մխիթարեան միա„բանութեան զճշմարտութիւն, տակաւին խորշէր 'ի ծոցոյ հա„րազատին իւրոյ, և զիմէր 'ի զիրկս օտարին հանդերձ խե„թիւ սակրութեան և հալածանօք անտի, չճանաչելով իմ „զաղդեցութիւն սիրոյ ընտանեաց և զակնածութիւն յօտա„րայ հղօրագոյն զճշմարտութիւն . . . „։

„Ով ինատակար աղդեցութիւն և ընդունայն ակնածութիւն „։

„Թողից ասել զանիրաւ զրպարտութենէ նորին ապա առ „անալոգ վրէժխնդրութեան „ (1)։

(1) Տես Հար. Ա. երես 13, 12, 13։

Այս ճշմարտութիւնն այնպիսի մի սերմն կը թողու Սարգիս վարդապետի բարի և բերրի սրտին մէջ, որ քանի կ'երթայ նա իր կեանքում այդ սերմն էլ կ'աճի կ'զուռճանայ և համաղգաշինական գործեր գործել կըտայ իրան։ Այդ զգացմունքն է, որ Սարգիս վարդապետն ինչպէս իր երկրորդ ցիշատակին մէջ՝ նոյնպէս էլ իր գործքին ամբողջ ընթացքում 'ի հարկին թէ գործով և թէ խօսքով անկեղծութեամբ ցոյց կըտայ (1)։

Զուր խօսք է այն ուրեմն, որ մեր մէջ առում է թէ՝ Նախանամութիւնը մեր Հայոց մէջ մեծ մարդիկ ծնեցնում չէ, և թէ մենք դատապարտուած ենք իբրեւ ասիական ժողովուրդ միշտ ստրուկ, միշտ ծառայող, միշտ սողուն հպատակ լինել օտարներին։ Այդ հայեցուածքն որ մեր մէջ շատերն ունին, ամենածուռ է և խիստ կողմնակի. Երանք են այդպէս դատողներն, որոնք Հայոց ժողովրդին չեն ճանաչել և կը դատեն միայն իրանց երկրացւոց բնաւորութենէն՝ ամեն երկրի Հայոց բնաւորութեան կնիքը։ Բայց մի բան ճշմարիտ է և է՝ հէնց մեր վերեւն ասածին հակառակը. պէտք է խօստովանինք, որ մենք Հայքս դեռ կարող չենք մեր մեծ մարդիկը ճանաչել և նրանց արժանի եղած յարգանքն ու մեծարանքը տալ և ասոր պատճառն ուրիշ բան չէ՝ բայց միայն մեր փոքր լինելն, ոչ թէ թուով ու դրութեամբ, այլ հայեցուածքով։ Երբ մեր ազգային հասարակութիւնը կը դիտենայ մեծամարդիկը դնահատել, նրանք էլ այն ժամանակ մատնա-

(1) Տես Հար. Ա. երես 629։—Խրատք եւ յորդորանք Հ. Սարգսի առ Պ. Աղեք. Ռափայելի, Հար. Բ. երես 2—3։ Նոյն հատորում, թուղթ Հ. Սարգսի առ Գեր. Հիւրմիւզ վասն դիտաւորութեան բարերարին եւ պարտուց միաբանութեան, այլովքն հանդերձ, երես 571 էն մինչ 587։ Թող այդ նամակը կարդացողը ինձ ասէ թէ մեծ մարդ չէ Թէոդորեան Սարգիս վարդապետը, եթէ կարող է։ Տես Հար. Գ. Սարգիս վարդապետի պատասխանը Գեր. Հիւրմիւզին, որոյ մէջ ցոյց է տալի նա թէ միաբանութիւնը պարտական է ընդունիլ անխափիր Մուրատեան վարժարանում բուն իսկ Հայոցմէ էլ եւ թէ պէտք չէ ամենուին նրանցմէ հաւատոյ նոր դաւանութիւն պահանջել. երես 36 էն մինչ 41, ծանօթութիւնն էլ միասին։ Տես նոյն հատորում երես 151, 152։ Նաեւ ամբողջ ԽԳ գլուխը 224 երեսէն մինչ 243։ Տես նաեւ նոյն հատորում, գլուխ ԽՁ երես 265 էն մինչ 319։ 651—655։

ցոյց կը լինին, մեծամարդիկն էլ ճանաչելու համար, մի հասարակութիւն մի փոքր ընդարձակ հայեցուածք պէտք է ունենայ։ Այն կանխադիտութիւնը, թէ մենք փոքր մարդիկ ենք, մեզ նախապաշարել է թէ մեր մէջ մեծամարդիկ չեն լինիլ։ Ահա՛ մեր այդ ասուածքին հակառակ ապացոյցը։ Ով որ Թէոդորեան Սարգիս վարդապետին չորս հատոր գիրքը կարդայ, անհնարին է որ չխոստովանի թէ նա այս դարուս Հայոց մեծ մարդն է. բայց միթէ՞ Հայոց ազգին ամենէն լուսաւորուած մասն համարուածը ճանաչեց Նրան. ոչ ամենեւին. ուրեմն ո՞ր կը մնար որ այն փոքր հասարակութիւնը կամ թէ կարճ հայեցուածքով ամիրաները, կաթողիկոսներն ու պատրիարքները պիտի նկատէին Նրա մէջ թէ՝ ի՞նչ մարդ ունի Հայոց ազգն իրան համար տատնոտ լիներորդ դարումը։

Բայց 'ի Սարգիս վարդապետէն, որ մեր առարկայն է այս տեղ, ո՞ր հայաբնակ քաղաքն իր մեծամարդիկը չէ ունեցել։ Այս իրողութիւնը ճանաչելու համար կը թողնենք ամեն մարդ իր յիշողութեան, որպէս զի միտը բերէ իր քաղքի մեծամարդիկը։ Միայն թէ այդ մարդը ճանաչող լինի և որոշող թէ ո՞վ է մեծ մարդը մի ժողովրդի համար և ի՞նչ բանի մէջ մեծ մարդ է դա՝ և թէ մեծամարդութեան հարկ եղած հանգամանքներն ունի, ինչպէս հոգեւոր ու մտաւոր կարողութիւն գործառնութեանց մէջ, համբերողութիւն և առաքինութիւն վտանգի և նեղութեան մէջ, հեռատեսութիւն յաջողութեան մէջ, անձնանուիրողութիւն 'ի հարկին և ամենէն մեծ յատկութիւնը մեծամարդութեան՝ անդրդուելի հաստատամտութիւն և անյուսահատութիւն իր դգացած ճշմարտութեան վրայ և խորանկատ ճանաչողութիւն մարդկանց, գործքերի և դէպքերի։ Այսպիսի յատկանիշ ունեցող մարդիկ երեւեցան այս վերջին դարերումն Հայոց մէջ և մենք կարող ենք մատնացոյց անել դրանք։ Բայց մի ուրիշ առարկութիւն էլ կարելի է անել այս մասին։ Միթէ կարող ենք հիմա ոչ թէ 'ի պաշտօնէ, այլ իրօրէն հաստատել թէ Հայոց ազգն այսօր հոգեւորապէս իր հոգեւոր տեսարցմէ է կառավարուում, որք են Էջմիածին, Պոլիս, Երուսաղէմ և ուրիշ տեղուանք, և թէ նրանց խնամքը սիրուում է առ հասարակ ամեն Հայ ազգայնոցով բայ, որոնք ցաղ ու ցրիւ բնակուում են աշխարհիս երեսին։

Ո՞չ բնաւ, Նախախնամական կառավարութիւնն այսօր բոլորովին այլապէս է գործում իր պաշտօնը Հայոց ժողովրդին մէջ քան ինչպէս հոգեւոր տեսարցը կառավարողութիւնը։ Ահա վեց եօթ դարուց հետէ մեր ազգը տարագիր է եղած իր հայրենի աշխարհէն և զուրկ է մնացած իր հոգեւոր և մարմնաւոր տեսարցը հսկողութենէն. հապա ինչպէս է կառավարուել այդ դրութեամբ, տարակոյս չկայ որ շատ թշուառութեամբ, վերջին ծայր նեղութիւն կրելով օտարներէ մանաւանդ հոգեւոր թշնամեացմէ, սակայն և այնպէս կառավարուել է և այդ կառավարութիւնը ոչ թէ մի տարուայ կամ մի դարուայ իրողութիւն է եղել, այլ դարեկան։ Այո՛, Հայոց ազգն եօթ ութ դարուց հետէ կառավարուել է, բայց ոչ թէ իր հոգեւոր կամ մարմնաւոր տեսարցը մեծամարդութեամբն, այլ Նախախնամութեան իր մէջ յարուցած մեծամարդկանց գործ.քովն ու խօսքովը։ Հէնց այդ Նախախնամութեան մեր մէջ յարուցած մեծամարդկանցմէ է և Բաղիշեցի Սարգիս վարդապետան Թէոդորեան։

Թողենք հիմա անց կացած դարերու մեծ մարդիկը և մեր դարուայ մեծ մարդկանցմով զբաղինք։ Յայտնի է որ Հայոց ազգն երկու կարգ է բաժանուում այսօր. եկեղեցական և աշխարհական։ Որանք էլ իրանց մէջ այլևայլ կարգերի են բաժանուած. վանական և քաղաքական կրօնաւորների, վանական, արհեստաւոր և տերութեանց ծառայողների եւայլն։ Բայց մի նոր կարգ էլ հիմա քիչ շատ առաջ է եկած, այն է՝ դրական մարդկանց կարգը, որոնց նշանակութիւնը դեռ նոր է սկսում Հայոց ազգին մէջ։ Արդ՝ հեշտ է, այդ մարդկանց կարգերը մեր աչքին առաջն ունենալով, նրանց մէջ առաջ եկած մեծամարդկանց ճանաչել իրանց յատկանիշովը։

Հէնց միանգամ որ այդ յատկանիշը մեր հայեցուածքի տակովը կը ձգենք, մի հանգամանք մեր աչքին կը զարնէ, այն է՝ իրանց մասնականութիւնը, որն որ դրոշմուած է իրանց թէ բարոյական և թէ նիւթական գործառնութեանց մէջ։ Դժբաղդութեամբ մինչեւ այսօր դեռ Հայոց ազգն իր ամեն կարգ ժողովրդին մէջ մի այնպիսի մեծ մարդ չունեցաւ, որ ու մեծագործութիւնը ընդհանրական և համազգային լինի, և կարելի է ասել, առանց մոլար հայեցուածքի՝ թէ այդ է

եղած մինչ այսօր Հայոց ազգէն պակսածը։ Մեր այս առաջ բերած իրը հաստատելու համար մի քանի օրինակ այս տեղ կը յիշենք։ Աշխարհական կարգէն Եղիազարեանց Յովակիմ իշխանը, հիմնադիրը Ղազարեանց անուն ուսումնարանին 'ի Մոսկուա, միայն ռուսահպատակ ազգայնոց համար։ Բերոյ-եանց և Էֆէնդեանցն պարոնայքը բարերարքը Ներսիսեան վարժարանին նոյնպէս ռուսահպատակ ազգայնոց համար, Եւդոկիացի Սամուէլ Մուրատն հիմնադիր Մուրատեան վարժարանին որ 'ի Փարիզ՝ մեծ մասամբ պապական Հայոց համար, Զմիւռնացի Պօղոս և Պետրոս բէգերն Եուսուֆեանց Զմիւռնիոյ ազգայնոց համար, Պէզճեան խազէզ Յարութիւն Ամիրայն Պոլսեցւոյ համար, եւայլն եւայլն (1)։ Նմանապէս և ուրիշ կարդերէն էլ յառաջ կարող ենք բերել որ մասնական լինին, այսինքն մի կարգ մարդկանց համար են մեծագործութիւն արել և ոչ ամբողջ ազգին։ Բայց կարող ենք զանազանել դրանցմէն Եւդոկիացի Սամուէլ Մուրատն և Աշտարակեցի Ներսէս Ե. Կաթողիկոսն ամենայն Հայոց, որոնք մի ընդհանուր հայեցուածքը են ունեցել ազգաշէնութեան գործին մէջ և ամբողջ ազգն բովանդակ են մտածել իրանց ազգաշէն գործառնութեանց մէջ։ Չեմ վարանիլ բնաւ ասել թէ Բաղիշեցի Թէոդորեան Սարգիս վարդապետն էլ նրանց կարգը կը բռնէ այս դարուայ Հայոց պատմութեան մէջ։

Բայց պիտի ասեն մեզ թէ, ի՞նչ, մի՞թէ Սամուէլ Մուրատն, Ներսէս Աշտարակեցին և Բաղիշեցի Սարգիս վարդապետը միայն տիեզերական մեծամարդիկ են, հապա՞ ուր են իրանց տիեզերական մեծագործութիւնքը, կա՞ց այդ տեղ։ Այս դարումն չէ որ պիտի տեսնես, այլ յիսուն տարուց յետոյ։ Երբ Սամուէլ Մուրատն իր կտակը գրել է, Բաղիշեցի Սարգիս

(1) Պէտք է նշանել այս տեղ որ այդ անձինքն ազգայնօրէն իրանց իմաստուն բարեգործութեամբը մեծամարդութեան անուն են ստացել, ինչպէս ստացել են քաղաքականօրէն էլ այն տէրութեան մօտ որուն ծառայել են։ Հայոց ազգը թէ Ռուսիա թէ Թուրքիա թէ Պարսկաստան եւ Հնդկաստան, կարելի է եւ ուրիշ երկիրներ, քաղաքական կարգէն կամ տէրութենական ծառայութեան մէջ չատ մեծամարդիկ ունեցել է, ադոր խօսք չկայ. բայց մեր վերոգրած մեծամարդութիւնն ազգայնօրէն է. այնպիսին միայն իրաւունք ունի Հայոց պատմութեան մէջ իր նշանակելի տեղն ունենալ։

վարդապետը, Յարութիւն անունով դեռ բաղեշ է եղել ներ-
կարարութեամբ զբաղած։ Սա էլ որ այսօր իր չորս հատոր
պատմութիւնը հրատարակել է, ով կարող է գուշակել որ ա-
նանց ընթերցանութեամբն ինչ ազդաշինական մտքեր յղացու-
թիւն պիտի ունենան։ Նոյնպէս Ներսէս Աշտարակեցին, երբ
գրիչը ձեռին Սառնամանեաց կայսեր պաշտօնէից դէմ մա-
քառում էր Հայոց հոգեւոր անկախութեան համար, չէր կար-
ծում երբէք որ սպիտակ ծովու ափունքներէն մարդիկ պիտի
վեր կենան իր օրինակին պիտի հետեւին և մեծամարդ պի-
տի հռչակեն այն մարդուն, որուն իր ժամանակից.քը մերժե-
ցին իրան։

Բայց այդ ասել չէ ամենեւին, թէ այդ անձինքը մեծա-
մարդութեան կատարին հասած են և իրանց գործն էլ մեծ
է և ընդհանուր, ոչ. ամեն մարդու մեծութիւնը իր գործի
վերջին կը յայտնուի և ոչ սկզբին։ որչափ մարդիկ որ սկզբ-
բում մեծ են կարծուել ու յետոյ փոքրացել են և որչափ էլ
փոքր, որ յետոյ մեծացել են։ Թէ այդ գաղտնիքն ի՞նչպէս
պէտք է իմանալ մի օրինակով ցոյց տամ, դատիր դու, եթէ
կարելի է, ոկիզբէն ճանաչել մեծ մարդը։

Այս վերջին ժամանակներին՝ մեր մէջ, ազդաշինութեան
դաշտում երեւան եկող մեծամարդիկ, ես կարծում եմ թէ՝
գրեթէ ամենքն էլ բոլորովին չեն իմացել և չեն գիտացել
բուն իսկ իրանց բանականութեամբ, թէ ի՞նչ է ազդաշինու-
թեան գործը, թէ ի՞նչպէս պէտք է ճանաչել և ինչպէս էլ
հարկն է գործադրել այն։ Ինչ որ եղել է մինչ այսօր մեր մէջ
ազդաշէն մարդկանց ձեռքով, կամ օրինակութիւն է եղել,
կամ հետեւողութիւն կամ լոկ՝ թող ասուի, մի խօսքով, մար-
դիկ մեզ գործի մէջ տեսնան, է եղած։ Մի օրինակով ցոյց
տանք մեր այս ասածն մեր ընթերցողին։

Նա՛ջ, առաջ ասենք թէ՝ ի՞նչ է ազդաշինութեան գործը։
Ես նմանեցնում եմ ազդաշինութեան գործը մի ահագին,
ճարտարաշէն և խորհրդաւոր մեքենայի, որ իր գործողու-
թեան համար ունի նաեւ ուրիշ այլեւայլ շատ մասեր, որոնք
ամենքն էլ առանձին մի գործողութիւն կը կատարեն իրանց
կողմէն, սակայն այդ մասերէն ոչ մինը միւսին հետ նմանու-
թիւն չունի, և ոչ մինն էլ, ինչպէս իր արած գործողութիւնը

գիտում չէ, այնպէս էլ միւսին կատարած պաշտօնը չէ ճանաչում, ինչպէս էլ միւսն ճանաչում չէ թէ ի՞նչ է մի ուրիշին արածը։ Օրինակի համար, մի ակն (անիւ) որ հակառակ միւսական գլոր է գալի, մի գերան, որու պաշտօնը բոլորովին ուրիշ դրութեամբ է միւս գերանէն, մի շատ էլ իրար կցուած օղակներ, որոնց ոլոր մոլոր անցուգարձը ակների և գերանների միջով, կարծես նրանց ծառայութիւնն անյայտ և խառնաչփոթ է անում։ Մի խօսքով մի ժամացոյցի կամ թէ մի դորձարանի մեքենայի նման մի բան։ Սակայն այդ ամէն մէկ մասերը մի գործ են կատարում առանց իրանց և միւսին գիտելութեան, թէ եւ նոյն և նման է այն գործողութիւնն որն որ կատարում է միւս մասը։ Այս մասերի ամենքին արդիւնքն է լինում մի, իրանց երեւութական հակընթաց մասնակցութեամբ և կատարում է մի գործողութիւն, որ բուն իսկ գործող մասերը չեն գիտել, բայց կատարում է և առաջ է գալի մի արդիւնք այդ մասերի իրար հակառակ և իրարու գործի վրայ անտեղեակ մասնակից աշխատութեամբ։ Սակայն այդ մեքենայն, ինչպէս ասացինք վերեւն մի խորհուրդ ունի, ինչպէս իր ամբողջութիւնը, այնպէս էլ իր ամէն մէկ մասերն էլ առանձին, և այդ խորհրդին գիտելութեամբն է որ այդ ահագին մեքենայն շարժ է գալի։ Այն մարդն ի հարկէ հանճարաւոր է և մեծամարդ մեր մէջ, որ այդ ազգաշինութեան գործը կատարում է ինչպէս այդ մեքենայի խորհուրդը ճանաչող մարդն որ այդ մեքենային գործողութիւն է անել տալի։ Ամէն մարդ մի բան է անում, ոչ ոք միւսին արածին նման բան անել չի կարծում և իր արածը լաւագոյն է համարում, այնպէս, որ ամենքն էլ իրանք իրանց համոզում են թէ իրանց արածը ծառայութիւն է ազգաշինութեան գործն առաջ տանելու համար, բայց երբ այդ ազգաշէնների ծառայողութեանց արդիւնքը մի, հետեւանքը նոյն դուրս չէ գալի, ընշանակում է, որ, ոչ ոք իրան յատուկ լինելու պաշտօնը ճշմարտապէս կատարած չէ, այլ հակառակ կամ դատարկ բան է շինել։ Ինչու համար այդպէս, վասն զի ոչ ոք իրան ծառայական մասը չէ ճանաչել, ոչ ոք մեքենայի ամբողջութեան խորհուրդն իր խելքումը չէ ունեցել, որ ինքն էլ նրա մասը լինելու խելքը կամ կամքը ունենար, որպէս զի ըստ այնմ աշխատեր։

Արդ, ով որ այդ աղդաշինական դործը, մեքենայի խորհրդին նման իր գլխումը կունենայ. ամբողջապէս, նա կարող է աղդաշէն լինել և մեծամարդ միանդամայն, կամ թէ ով որ այդ մեքենային դոնէ մի մասին պաշտօնը ճանաչելով իր վիզն կառնէ կատարելու, նա 'ի հարկէ աղդաշէն և մեծամարդ է անտարակոյս։ Բայց բանն այն է, որ աղդաշինութեան դործի խորհուրդը աղդաշէն լինելու մտադիր եղող մարդն իմանայ ու տեղեկանայ ու յետոյ սկսի դործել։ Շատ մարդիկ մեր մէջ ծնում են և կարծում են ճանաչել այդ մեքենայի խորհուրդը ու սկսում են դործել մեծ եռանդով, բայց դժբաղդութեամբ անդործութեան մէջն են մնում, պատճառ որ իրանք կարող չեն լինում այն մասերը շարժ տալ, որոնք իրանց վիզն են առել դործելու, կամ թէ այդ մարդիկը միայն մեքենայի մի քանի մասերը դործել են իմանում, բայց ամբողջութիւնը կառավարելու խորհուրդը ըմբռնող չեն, 'ի հարկէ այդ կերպով է որ աղդաշինութեան դործը յետ է մնում։

Այս դարումս, ըստ իմ հայեցուածքին մի քանի աղդաշէն և մեծամարդիկ ունեցանք, որ այդ մեքենային մեծ խորհուրդը ունեցած են եղել իրանց դլխումը, եթէ ոչ ամբողջապէս, դոնէ մասնաւորապէս, որոնցմէ մինն է Թէոդորեան Սարդիս վարդապետն Բաղիշեցի և միւսն էլ Աշտարակեցի Ներսէս Ե. ամենայն Հայոց կաթողիկոսը։

Թէ եւ այս տեղ մեր առարկայն Սարդիս վարդապետին վրայ զբաղել է. սակայն մեր ընթերցողները թող ներեն մեզ բաղդատութիւնն իրրեւ ապացոյց առաջ բերել այս տեղ, որպէս զի աւելի լաւ կարող լինինք հասկացունել մեր միտքը։ Այդ երկու մեծամարդիկն այնքան իրար կը նմանին իրանց կեանքի նշանաւոր հանդամանքներումը, որ անկարելի է չը նշմարելը։

Սարդիս վարդապետն իր հասուն տարիքումը դուրս է դալի իր քաղքէն մի նպատակով, այն է ուսումն առնելու, ուսումն առնել նշանակում է կերպարանափոխուիլ. կամ թէ վերանորոգուիլ, դնում է Եւրոպա արդէն իր աշխարհի դրութեան տպաւորութիւնն անջնջելի կերպով ունենալով իր յիշողութեան մէջ։ Նոյնպէս է պատահում և Ներսիսին, սա դուրս

է դալի Աշտարակէն կամ Էջմիածնէն տղայ հասակումը տեսնում է Զմիւռնիա և Պոլիս և այլ տեղուանք, իր ժողովրդին դրութիւնը յափշտակում է իր միտքը ու մտածում է փոխել այն, բայց մի ժողովուրդ փոփոխելու համար, պէտք է մարդս նախ ինքը փոփոխուի կամ թէ փոփոխուած ծնի։ Այս երկուսն էլ ծնուած են լինում փոփոխուած, այսինքն մեծամարդ լինելու համար ինչ անձնական և բնածին կարողութիւն որ պէտք է, ունեցած են լինում, թէ բարոյական և թէ բնական։ Օրինակի համար երկուսի վրայ էլ կերեւայ մի աննման աշխատասիրութիւն իրանց մտքում դրած առարկայով, վերջին ծայր հաստատամտութիւն իրանց ընդունած ճշմարտութեան վրայ և խորագիտութիւն, ոչ շրջանկատ, այլ կողմնակի՛ այն անձանց և գործոց մէջ, որոնք իրանց ձեռնարկութեան բոլորտիքն են դտանում։ Ո՛չ շրջանկատ և կողմնակի ասացի. վասն զի այս երկու անձանց ձեռնարկած գործերն այնքան մեծ և այնքան ընդարձակ են և իրանք միմիայն անձնական և բնածին կարողութեամբ են մէջն ընկած այդ գործերին, որ անհնարին է շրջանկատ լինել առանց ստացական և դիտնական կարողութիւն ունենալու։ Բատ իմ հայեցուածքին թէ Ներսիսին և թէ Սարգսին մէջ այդ ստացական և դիտնական կարողութիւնը պակսած է համեմատութեամբ իրանց ձեռնարկած գործառնութեան։

Սարգիս վարդապետին մտքումը մի անդամ որ ութանասունումէկ հազար անդղիական լիրայի ստացողութեան դաղափարը մտնում է, հէնց այն րոպէէն մեծ մարդ է դառնում, մեծ մարդու նման է մտածում, 'ի հարկէ մեծ մարդու նման էլ գործում է՝ և այդ ստացողութիւնը յիրաւի զարմանալի կերպով դլուխ է բերում, Ներսէս կաթողիկոսն էլ մի անդամ, որ իր ժողովուրդն Պարսից լուծէն ազատելու հնարքը մտածում է ու տեսնում է այդ ռուսական կառավարութեան ձեռնտուութեան մէջ, նոյն միջոցէն, իրրեւ մեծ մարդէ շարժ դալի, վասն զի իրրեւ մեծ մարդ է խորհում և զդում իր աղդին վրայ։ Ոչ Սարգիսը և ոչ Ներսէսը, եթէ ոչ բոլորովին՝ դոնէ մի փոքր լինի չեն մտածում իրանց գործողութեան մեքենային յետոյ ինչպէս և ինչ կերպով շարժ դալուն վրայ։ Ինչպէս Սարգիսն երբէք չէ մտածում, ինչպէս կերեւայ դոնէ իր

գրաւած քներէն թէ ի՞նչպէս Մխիթարեան միաբանութիւնը կարող պիտի լինի տասնիններորդ դարումը Հայոց ազգի բարոյական և գիտական վերաշինութեան մեքենայն լինել, և Մխիթարեան միաբանութիւնն էլ իր գրութիւնը Հայոց ազգին Հռովմայ պապին և ամենէն մեծն Ծաւալայիին և նրա աշակերտներին առջև։ Նոյնպէս էլ Ներսէսն իր մեծ ձեռնարկութեան միջոցին ամենեւին իր աչքին առջև չի բերում թէ ի՞նչ է իր ազգի գրութիւնն ու այն մարդկանց գործակցութիւնն, որոնցմով գործ պիտի տեսնայ, և ամենէն աւելի Ռուսաց կայսեր նպատակն և նրա պաշտօնէից նշանակութիւնը։ Սարգիսը գործը գլուխ է բերում ութանասուն մէկ հազար անկլիական լիրաները բերում Մխիթարեանց ձեռին յանձնում։ Ինչպէս Ներսէսն էլ բոլոր Պարսից ձեռին եղած հայքն խլում է նրանցմէ և տալիս Ռուսաց կայսեր ձեռին։ Հիմա ազգաշինութեան մեքենայն երկու տեսակ եղաւ, մինը Եւրոպայում է կատարւում, միւսը Ասիայում, մինը բաղկանում է Սարգիս վարդապետով։ Մխիթարեան ուխտով և Հռովմայ պապով կամ միւնոյնն է Ծաւալոցականներով։ Միւսն էլ, Ներսէսով, Հայաստանու խեղճ ժողովրդով, Ռուսաց կայսերով կամ թէ միւնոյն է նրա պաշտօնեայներով։ Այդ մեքենային խորհուրդն ով է լինում ամբողջապէս ունեցող. ըստ ինձ, միմիայն Սարգիս վարդապետն և ոչ Մխիթարեանք, նոյնպէս միմիայն Ներսէսն և ոչ Հայոց ազգն. որո՞նք պիտի լինէին Սարգիս վարդապետին ազգաշինութեան մեքենայն գործել տուողները, 'ի հարկէ Մխիթարեանք. նոյնպէս որո՞նք պիտի լինէին Ներսէսի մեքենայի պատոյտ տուողները, յայտնի է, որ Հայոց ժողովուրդն որ 'ի հիւսիսային Հայաստան։ Ի՞նչ արաւ Հռովմայ Պապը Մխիթարեանց, տեսաւ թէ չէ՞ որ շարժ է պ ալի նրանց ազգաշինական մեքենայն, բուն իսկ նրանց ձեռքով անշարժ կացուցայն, և նրա գաղանի խորհուրդն խմայողն արտաքսել տուաւ դուրս գործարանէն։ Նոյն հարցումը, ի՞նչ արաւ Ռուսաց կայսրն Հայոց ազգին, երբ տեսաւ թէ չէ՞ որ Ներսէսի ձեռքով այդ մեքենայն պիտի շարժի ազգաշինութեան համար, նրա գաղանի խորհուրդն ունեցողին բանտարկել արաւ տարիներով, մինչեւ որ հալուեցաւ և մաշուեցաւ մեքենայն և պատրաստուած մեքերը ցնդ ուեցան ու անհետ եղան։

Մի վառաւոր միանդամայն մի վսեմագոյն երեւոյթ կայ այս երկու ծերունիների աղդաշինութեան մէջ, որ անկարելի է չնշմարեն նրանք, որ դրանց կեանքն իրանց ուսումնասիրութեան առարկայ են արած. թէ Ներսէսը և թէ Սարգիսը, կը տեսնես որ անդադար դրիչը ձեռներին, հա՛ դրում են, հա՛ դրում. կարծում են խօսելով մի ուղղութիւն կարող լինին տալ իրանց մեքենայի մասերին, որ իրանց պէս դործեն։ Ահա՛ այս կէտին է որ մեծամարդիկ միշտ սխալած են և սխալւում են, պատճառ, որ կարծում են թէ ինչպէս որ ըմբռնած են իրանք իրանց դործի խորհուրդն, այնպէս էլ նոյն դործի դործողներն էլ ըմբռնած են այն, կամ թէ կարծում են, որ իրանց դրելովն ու խօսելովն կարող կը լինին նրանց ըմբռնել տալ նոյն դործի խորհուրդն, ինչպէս որ իրանք ըմբռնել են։ Հէնց ։ ըստ ինձ, այս պատճառով է, այս երկու մեծամարդկանց անընդհատ թղթակցութիւնքն իրանց աղդաշինութեան դործին մասնակից եղողների հետ, այն նպատակով, որ նրանց էլ ոգեւորեն նոյն դործի նկատմամբ, ինչպէս որ իրանք ոգեւորուած, դինաւորուած և պատրաստուած են եղել որևէ արդելք յաղթելու իրանց նպատակին հասնելու համար. բայց մեքենայի միւս մասերը դործ չեն տեսնում, պատճառ որ չեն զդում իրանց դործն որ դործեն, կամ թէ որ դործում են, բոլորովին ուրիշ բան մ անելու համար են անում։

Սարգսի և Ներսէսի մեծամարդութեան մէջ իրարու հետ ունեցած նմանութիւնը միմիայն իրանց դլխին պատահած դէպքերումն ու հանդամանքներումը չէ, այլ իրանց անձնական և բարոյական կարողութեանց մէջն էլ կ'երեւայ այն, բայց այդ բաղդատութիւնն ընթերցողին աչքին առջեւ խիստ նշմարելի անելու համար, դժբաղդութեամբ Ներսէսի անհամար դրուածքներն ամփոփուած և տպագրուած չունինք, մինչդեռ Սարգսինները մեր աչքին առաջն են, որոնցմով տեսնում ենք նրա մեծամարդութեան պատկերն իր քառասուն տարուայ կեանքումը, նոյնպէս պիտի տեսնէինք և Ներսէսին իր ութսուն տարուայ վարքումը, թէ որ նրա անհամար թղթերն ու նամակները հրատարակուած լինէին։

Այս երկու մեծամարդկանց մէջ մի իրատ առնելու բան էլ

կայ, այն որ պէտք է մեծ բանի տեղ դնել։ Որքան որ իրանց անձնական և բարոյական կարողութիւնքն իրանց հանճարը բարձրացնումեն և շատ անգամ իրանցմէ պակաս ստացական և դիտական կարողութեանց տեղն են բռնում, բայց մի ամենակարեւոր բանումը զգալի է այդ պակասութիւնը։ Սարգիսը, պապական իշխանութիւնն ընկալնում է իբրեւ մեծ, բարեբաղ և պաշտպան քրիստոնեայ աշխարհիս, նոյնպէս Ներսէսն էլ Ռուսաց կայսրութիւնը։ Իրանց հանճարը քաղաքաղխութեան տեղը բռնում չէ, որպէս զի հասկանային թէ ի՞նչ է իրանց և իրանց ծառայութեան նշանակութիւնը վեհապետների առջեւ։ Ոչ Սարգիսն է հասկանում, որ իր քահանայական կերպարանքով միմիայն Հռովմայ պապին համար է և ոչ ուրիշին, և ոչ էլ Ներսէսը նշմարում է թէ իր և աղգի ծառայութիւնքն միմիայն Ռուսաց կայսեր համար են։ Երբ ենք մենք այդ իրողութիւնը հասկանում, այն ժամանակ, երբ թէ՛ մինը և թէ միւսն իրանց ծառայութիւնքը մեժում են դրանցմէ և նուիրել են կամենում իրանց աղգին։ Այդ միտքը միանգամ որ հասկանում են վեհապետները, կամենում են փճացնել ծառայողներին և վայելել նրանց ծառայութիւնքը։ Այսպէս եղած ենք տեսնում բանը թէ՛ Մուրատեան վարժարանին և թէ Աբարատեան դաւառին այժմեան վիճակին։

Բայց որովհետեւ այս երկու անձանց գլխովն անց կացած այդ դէպքերի այլևայլ հանգամանքները քննել այս գրուածքի առարկայն չէ, այլ պատմութեան փիլիսոփայութեան, զանց առնենք շատ խորը դնալն երին և դարձուենք մեր նայուածքը Թէոդորեան Սարգիս վարդապետի հրատարակութեանը վրայ։

Թէոդորեան Սարգիս վարպապետի անունը վենետկու Մըխիթարեանց տպարանէն դուրս եկած ոչ մէկ գրքին վրայ գրոշմուած տեսած չունէինք, դոնէ մեր աչքի տակովն ընկած գրքերին։ Կարծում էինք այդ մարդն ոչ այնքան նշանաւոր գրականութեան առպարիզում. բայց մեր կարծիքը հիմնուած չլինելով զօրաւոր պատճառների վրայ, փարատեցաւ խակոյն երբ այդ չորս հատոր գրքի հրատարակութիւնն երեւան լոյս ընկաւ։ Պիտի ասեն մեզ շատերն թէ՝ այդ գրքերն ի՞նչ գրականական արժանաւորութիւն ունին, և թէ գրանք մի մեծ

հաւաքածոյ են նամակների Սարգիս վարդապետի ձեռքով իրարու հետ. ըստ կարգին դասաւորուած և շինուած մի քառանամեայ կամ կէս դարեան յիշատակարան պատմութեան համար. իսկ Հայկազեան վարժարանի պատմութիւնը ոչ թէ յիշատակարան է, այլ պարսաւանք իր ձեռնարկութեան արդելք եղողներին և արդարացումն իր անձին, որ կարող չէ՛ր դուխ բերել ինչ որ վիզն էր առել կատարելու. Մանասանդ և Մխիթարեան Աբբայից պատմութիւն ասուածը, ոչ թէ պատմութիւն է կամ վարքագրութիւն Մխիթարեան Աբբայից, այլ սրբանեարէն մի քանիսին վրայ ջատագովութիւն, մի քանիսին վրայ էլ պարսաւագրութիւն.

Այդ հայեցուածքն ունենալ այդ չորս հատոր գրքի վրայ, նշանակում է բանը ըստ երեւութին և կողմնակի դատել և արդէն ունենալ իր հայեցուածքը գրաւուած կամ բռնուած ուրիշ ակնածութեանցմէ, կամ թէ չէ՝ պատկանիլ Հայոց ազգի մէջ այս կամ այն կողմին և ոչ ամբողջին, կամ թէ ոչ մէկին պատկանիլ և ոչ իսկ հայութեան, էլ աւելին՝ ոչ թէ միայն կարդացած չլինել այդ գրքերը, այլ նաեւ ոչ տեսած անգամ. Այլ միայն լսած և ուրիշներուն հաղորդուած տեղեկութեան վրայ կազմել այդ հայեցուածքը. Մեր մէջ դժբաղդութեամբ գրքերի վրայ դատաստան անողներն ըստ մեծի մասին այդ կարգէն են. յայտնի բան է, որ այդ գրքին վրայ այն մարդիկ պիտի դատաստան կտրեն, որոնցմէ շատերն այդ գրքի նիւթերին առարկայ են եղած կամ թէ՝ եթէ շատերն եղած չեն, գոնէ այդ շատերի բարեկամների մեծ մասն եղած են. Այդ գրքի վրայ ուղիղ դատաստան այս դարումս չլինել, այլ եկող. բայց եթէ ուղիղ դատաստան էլ անող լինի՝ ոչ մէկը ըստ չի հանել նոյն ակնածութեան համար. Սարգիս վարդապետն պապական Հայոց մէջ Մխիթարեանքն ու ծաւալոցականքն եւ ում, խորհում է իրանց կրակոնը. իսկ բուն Հայոց մէջ Կաթուղիկոսը, Պատրիարքը և Ամիրաները իրանց ազգա, կեղծ և չնչին գործքերովը խաղք և խայտառակ է անում. սոլ է մնում դէնը, ողորմելի Հայոց ժողովուրդն, որոյ հետ Սարգիս վարդապետը ամենեւին գործ չի ունենում իր կեանքում և որոյ վրայ ինչպէս էլ կ'երեւայ, ամենեւին դիտակցութիւնն էլ չունի. Այդ դրսեւորական արդիւնքը, ըստ ինձ, Մխիթարեան մի-

աբաններէն հրատարակուած ամենաընտիրն ու ամենակարեւորն է։ Ամենաընտիրն է իր լեզուի մաքրութեան, աղնութեան և ազդութեան կողմանէ. միաբանների գրած նամակներումն այնպիսի ընտիր և յատակ լեզուով գրուածներ կան, մանաւանդ Հիմնիւղեան եղբարց Երդուարդի և Գէորգի, Անթիմոսեան Աբրէնի, Ամլաղեան Գաբրիէլի, բուն իսկ իրանները, Թէոդորեան Յարգսի, որ կարելի է ասել, ըստ ինձ, առաջին կարգի գրուած, Մխիթարեանց բոլոր գրուածքների վրայ։ Ինչու, անոր համար որ Մխիթարեան վարդապետներն իրանց ձիրքը Հայոց լեզուի գիտացողութեան մէջ առիթ ունին միայն իրանց նամակներումը ցոյց տալ, իբրեւ հեղինակութիւն. այդ նամակներին ամենքն էլ հեղինակութիւն են, արտայայտութիւն կենդանի մտածմունքների, իրանց ամենակարեւոր և ամենաներքին գործքերի մասին. այդ նամակներն իտալերէն կամ ֆրանսերէն նախամտացուած կամ ղդացուած չեն, այլ բուն լաւ Հայոց լեզուով մտածողների և գրողների բարբառը։ Այս ընթերցող, Մուրատեան վարժարանի պատմութիւնը՝ նամակների ձեւով գրուած Մխիթարեան վարդապետներէն և իրարու հետ դասաւորուած, Թէոդորեան Յարգիս վարդապետէն, այս դարուս Հայոց նախնի գրականութեան առաջին կարգի յիշատակարանն է։ Օրինակ է, յիրաւի, գրոց լեզու սորվող ուղղներին ազդութեան, կենդանութեան և աղնութեան ոճի, ասացուածքի ու դարձուածքի կողմանէ, յատուկ միայն իններեւտասաներրորդ դարու Հայոց նախնի լեզուին։ Իսկ իբրեւ պատմական յիշատակարան, ոչ մի պատմիչ, որքան հանճարեղ, որքան գիտնական լիներ, երբէք չէր լինել կարող այնպէս բնական, ճշմարիտ և իսկութեամբ Մխիթարեանց միաբանութեան յիսուն տարուայ կեանքը յառաջ բերել. այդ տեղ, ոչ կողմնակցութիւն, ոչ չարայուշութիւն և ոչ էլ կանխադատողութիւն տեղ ունին բռնած. ամեն գործող անձ, իր անձնովը ներկայ է խաղումը. իր մտքերը, իր զգացմունքները և իր հոգին ինքն իր ձեռքով, կենդանի գոյներովը նկարած, խորը դիտելու հարկ չկայ։ Պէշիկթաշլեան Աղէքսանդր վարդապետը մի նամակում Պօլսոյ պապական Հայոց սիրան իրանց բերանն է դնում, այնպէս որ հոգիքը զանազանւում են. այս Պօլսեցի,

այն Անկուրիայի, մի ուրիշը Վանեցի, միւսին էլ Վերջապէս Տրապիզոնցի լինելը ցոյց տալով։ Տեսնում ենք այդ դրականական դաշտումը, որ Անկուրիայի, Պօլսեցի, Կարնեցի և էլ չեմ իմանում ուրիշ որ տեղացի մոլեկրօն մարդիկ՝ խիստ սահմանափակ դիտողութեամբ ազգային և եւրոպական ուսմանց մէջ, յարձակում են խեղճ Բաղիշեցի Սարգսին վրայ։ Սրանց կռիւն տեսնելու բան է բանասիրի համար. վասն զի Եղիշէի, Եղնիկայ, Ոսկեբերանի, Պարբեցու, Սահակ Պարթեւու և այլ մեծամարդկանց լեզուով են կռւում, իրար մօրուքը պզտկտում, քիթը կցում, մինչեւ անդամ իրարու երեսին ապտակ թրխկացնում և բռնավարի մշտում. ի՞նչ է, Հռովմայ պապն այսպէս է կամենում, ուղղափառութիւնն այնպէս է պահանջում, Հասունը Հայոց մի բուռն ժողովուրդն իրանց դէմ է յարուցանում։ Ողորմելի ու ողբալի խնդիրներ ու կռիւներ, որոնց դատաւորը, Հռովմայ Պապը պէսի տակոմն է ծիծաղում և ուրախանում, վասն զի ինքը պիտի շահուի ինչպէս որ էլ շահուեցաւ։

Իսկ Հայկազեան վարժարանի պատմութիւնն էլ ուրիշ բան չէ, բայց միայն մեր Պօլսոյ ազգայնոց՝ այն ժամանակին, որ առաջանին լինելուն հայելին՝ ազգաշէնութեան և ուսումնասիրութեան մէջ, որոնք իբրեւ զարդարուն հագուստ են նը կատած ուսումնադիտութիւնն, ինչպէս նաեւ մինչեւ այսօր նոյն զգացողութիւնն ունին դեռ եւս, և այդ ուսումն ու դիտութիւն տուողներին էլ իբրեւ դերձակ, վասն զի պարտքով ուսում ուզել են առնել, ինչպէս որ դերձակէն պարտքով հագուստ։ Իսկ Այվազեան Գաբրիելի և Գալֆաեան եղբարց մասին, այդ Հայկազեան պատմութիւնն առիթ եղաւ ցոյց տալու թէ ի՞նչ մարդիկ կան իրանց թագուն պահած, ինչպէս Էջմիածնի վեղարների և փիլոնների տակ, նոյնպէս Ս. Ղազարու եռանկիւնի դատակի և կնկուղի տակ։ Այվազեանը պապի ձեռքէն վախչում և Ռուսիոյ կայսեր ճանկ է ընկնում. որ տեղ է քաղաքիտութիւն։ Ամբրոսիոս և Խորէն եղբարք, մինը կընկուղը դէն է գցում, ինչ որ եմ, ամենքը թող գիտենայ, ասում է, միւսն էլ թքնում է Թէոդորեանի նպատակին վրայ. քայի է տալի Այվազի զորձին և դալիս է կուրերի աշխարհում կուռք լինելու։ Հայկազեան վարժարանի պատմութիւնն ուրիշ մի բան էլ ցոյց տուաւ մեզ, այն է, որ մենք Հայքս դեռ

մենք մեզ մի դատիարակութիւն տալու կարող չենք, այլ պէտք է դնանք մուրանք այդ օտար ազգերէն, ահա այս է ամենէն ցաւալին, ըստ ինձ, Հայոց ազգի համար այս դարուս մէջ։ Թէ ինչ կը նշանակէ մուրացողի դատիարակութիւն, Աստուծով առիթ կ'ունենանք ուրիշ անգամ խօսելու այդ մասին։ Մխիթարեանց Աբբայից պատմութեան մասին ասելիք խիստ շատ բան կայ, բայց այս բանաքննական գրուածքի մէջ տեղ չունի։ Սարգիս վարդապետան անմոռացութեամբ անշուշտ, պոռոնկն անունն է տուել մի քանի ծանօթութեանց Աբբաներու կենսագրութեանց։ Եթէ իբրեւ պատմութիւն առնենք մեր բանաքննութեան տակ այդ գրուածքը, շատ բանի կողմանէ մեր հայեցուածքը կը տարբերի քան զՍարգիս վարդապետինը։ Սակայն և այնպէս չենք դադարիլ Մխիթար Աբբայն մեծ մարդ նկատել Սարգիս վարդապետին հետ՝ քանի որ կը տեսնենք նրանում մի նպատակ Հայոց ազգին բարոյական լուսաւորութեան ծառայելու, բայց եթէ ընդհակառակն այդ անունով՝ Հռովմայ պապին ամենահլու ծառայող կը նկատենք նրան՝ հաւատոյ ծաւալման համար, այն ժամանակ կարծենք մեզ իրաւունք կըտայ Սարգիս վարդապետը նկատել Մխիթար Աբբայն իբրեւ մինն 'ի Ծաւալոցականաց, որ մի կերպարանք կը կրէ իր վրան, այն է՝ իբրեւ թէ Հայոց ազգայինը։

Կը մնայ մեզ խօսիլ նաեւ Թէոդորեան Սարգիս վարդապետին Պոռոնկն Մուրատեան, Հայկազեան Վարժարանաց և Մխիթարեան Աբբայից չորս հատոր հրատարակութեան նշանակութեանը վրայ։ Այդ հրատարակութեանց նշանակութեանը վրայ՝, մենք, ինչպէս սկզբումը ասացինք, մեր հայեցուածքը պիտի տանք՝ ոչ իբրեւ այս կամ այն սկզբունքի տէր Հայ, այլ Հայոց բուն ազգային և եկեղեցական պատմութեան պատկանող Հայ։ Ո՞վ կարող է ասել թէ՝ Սարգիս վարդապետի գիրքն իր ներսովն ու դրսովը և իր ամեն կողմի տեսնուածքներով, սկիզբէն ցվախճան Հայոց գիրք չէ, Հայոց համար գրուած չլինի և Հայոց կեանքէն էլ չբղխած։ Այդ հրատարակութիւնն ինչպէս իր տեսակին մէջ անմման է, նոյնպէս էլ է իր հեղինակութեանը կողմանէ։ Հայոց կեանքը ադոր մէջ բաց 'ի ժողովրդայինը, իր ամեն տեսակ հանգամանքներովն ու կերպա-

բանքներովը խիստ կենդանի երևան է եկած։ Այն տեղն են Հնդկաստանի Հայք, Սուրբ Ղազարու վանքի ծերունի և մեծանուն վարդապետները, Պօլսոյ Ամիրայներն ու Բէգերը, Թիֆլիզու իշխաններն ու ազնուականները, Հայոց Կաթողիկոսներն ու Պատրիարքները. Թող վարդապետները, ուսումնականները, աղդասէր և ուսումնասէր ժողովրդականները։ Այն տեղն են նաև Անկլիական, Աւստրիական, Ֆրանսիական, Պապական, Թուրքական և Ռուսական կառավարութիւնքը։ Այն տեղն են վերջապէս՝ ոչ թէ միայն այս դարուայ Հայոց պատմութեան ամենակարևոր մասը, այլ նաև մեր ժամանակուայ թէ՛ աշխարհական և թէ եկեղեցական մեր մեծամեծ մարդկանց բարքն ու վարքը, մտքերն ու զգացմունքները, մի խօսքով դրեթէ կենդանի և խօսուն պատկերները. իսկ այդ դրքին նշանակութիւնն այնքան մեծ է Հայոց համար, որ համեմատութիւն չլինիլ. կարող եմ ասել բացարձակ, թէ այդ դրքով Բաղիշեցի Թէոդորեան Սարգիս վարդապետը Հայոց համար խիստ շատ մեծ մարդ է, քան թէ՝ այն հայր Սարգիս Թէոդորեանն, որ երբեմն աթոռակալ Մխիթարեան միաբանութեան, վերատեսուչ Մուրատեան, Ռաֆայէլեան և Հայկազեան վարժարանաց 'ի Վենետիկ, 'ի Պատաւիոն, 'ի Փարիզ. վասն զի այդ դրքի հրատարակութեամբ արած բարիքը Հայոց աղդին և Հայաստանեայց Եկեղեցւոյն բուն իսկ իրանն է, իր սրտէն բղխած հարազատ զգայմունքն է, մինչդեռ իր հիմնադրութիւնը և վերատեսչութիւնը վարժարանների, Մխիթարեան անունովն էր և պապական դրօշմ էր կրում իր վրայ. որովհետև որ և է կերպով էլ լինէր՝ գործիք էր թէ՛ ինքը և թէ իր վարժարանները պապական աղդեցութեան Հայոց աղդային և բարոյական լուսաւորութեան մէջ. բայց չեմ իմանում ի՞նչպէս մի անհերեւան զօրութիւն փոքր Հայաստանցւոյն կանդնածը (Մխիթար Սեբաստացւոյն) բարձր Հայաստանցւոյն (Բաղիշեցի Սարգսին) ձեռքով քանդեց, կործանեց Հայոց համար, երբ նա վնասակար լինել սկսաւ։ Այո՛, Հայք քանի որ իրանց հայրենական հարազատ իշխանութենէ զրկուել են, տանջում և չարչարում էին այդ սեւազդեստ տիկնապահներէն Հռովմայ պապի, երեք չորս հարիւր տարի շարունակ, նրանց սադայելական ծիծաղին,

հեգնութեան, ատելութեան և մի յաւիտենական թշնամութեան առարկայ էին եղած. խաւարումը մի թուր էր շողշողում Հայոց գլխին, և ողորմելի Հայք լոյս չունէին տեսնելու այդ խաւար անդունդն ու շողշողուն թուրը։ Անիրաւունութիւնն իբրեւ արդարութիւն, խաբեբայութիւնն իբրեւ ճշմարտութիւն, տգիտութիւնը, դերութիւնը և խաւարն իբրեւ լուսաւորութիւն և ազատութիւն էին ընծայում Հայոց, և խեղճ Հայք, լոյսը խաւարէն, իմաստութիւնը տգիտութենէն, դերութիւնն ազատութենէն և ապօրինութիւնն օրինաւորութենէն որոշելու, ճանաչելու և ընդունելու կարողութիւն չունէին։ Ահա, Բաղիշեցի Սարգիս վարդապետն իր չորս հատոր գրքովը մի ճրագ բերաւ Հայոց ազգի աչքին, որ տեսնէ իր աչքին առաջ թէ ո՞վ է եղել իր դարեկան թշնամին և ո՞վ է մինչ այսօր իր արիւնարբու ոխերիմը։ Եթէ Սարգիս վարդապետի չորս հատոր գրքերը Հայոց ազգի աչքերը չբաց անել իր թշնամիքը ճանաչելու, իր գտնուած դրութեան վրայ տեղեկանալու և իր բռնելու ուղղութիւնը որոշելով, իր պարտքը կատարելու, իր ապագայն պատրաստելու, մի խօսքով ազգայնօրէն, բարոյապէս և մտաւորականութեամբ լուսաւորուելու և կենդանանալու պատրաստուելու. էլ չեմ իմանում ի՞նչ դերբնական զօրութիւն պէտք է իրան... վասն զի, ահա՛ Բաղիշեցի Սարգիս վարդապետը իրան համար վաթսուն տարի կենդանի նահատակ լինելուց յետոյ այդ գիրքը ձեռին նրա լուսաւորութեան համար զոհ է եղած և օտար երկրներում պանդխտութեան մէջ հալւում է և մաշւում։

Այդ չորս հատոր գրքին նպատակն ի՞նչ է. իրանց սկզբումը և վերջում ինքը Սարգիս վարդապետն ամեն մանրամասն հանգամանքներովն ընթերցողին աչքին առաջը դրած է. ուստի կը մնայ Հայոց ուսումնասիրել երկար բարակ այդ գիրքը և ճանաչել անոր մէջ իրանց ազգը տասներիններորդ դարումը։ Բայց թէ հասաւ կամ թէ պիտի հասնի Սարգիս վարդապետն այդ գրքերով իր նպատակին, այդ չեմ կարող հէնց այժմէն որոշել և մի վճռողական բան ասել. վասն զի ո՞վ կարող է գիտենալ թէ ի՞նչ պիտի լինի ապագայումը, այսքան միայն յայտնի է թէ նրա խիզճը հանգարտ՝ պէտք է լինի,

վան զի դեռ ոչ ոք չտեսանք այս դարումն, որ վեր կենայ ու ցոյց տայ իրան որ և է ապացուցով թէ ինքն էլ Հայոց ազգի ազգային և բարոյական լուսաւորութեան համար այնքան արիւն քրտինք թափած, այնքան վիշտ և ցաւ է կրած, որքան Սարգիս վարդապետը. ուրեմն մաղթենք նրա համար հանգիստ կեանք այսուհետեւ և բարի վախճան իր ուխտաւոր ամեայ ծերութեան մէջ։

Ընթերցողը, կարելի է որ այդ իմ վերջաբանը մի փոքր խիստ գտնում լինի հայեցուածքի մասին պապական Հայոց վրայ եւ այդ բանը տայ մի ազգային մոլեռանդութեան իմ կողմանէ. այդ կանխադատումը հիմակուց կը մերժեմ եւ բնաւ իր տեղին չեմ համարիլ. ինչու, պատճառ որ նախ թող ինքն էլ կարդայ այդ չորս հատոր գրքերն. բայց բան հասկանալու համար կարդայ եւ ոչ զուարճանալու, ու յետոյ իմ հայեցուածքը դատապարտէ, անոր նշանակութեան մասին։ Հրամերէք, ընթերցող, ազգային զգացմունքը վիրաւորուում է եւ զայրանում, երբ Պէշիքթաշլեան հայր Աղէքսանդրի բերնէն այս յետադայ գրուցուածքն է կարդում. «Եւ միթէ անգլիտանային Հայք թէ բաժանեալ եմք 'ի նոցանէ, ապա թէ ոչ ընդէր էր նոցա հալածել զմեզ քսան եւ հինգ ամօք յառաջ, զոր եւ այժմ իսկ առնէին դժնդակագոյնս, թէ գոյր նոցա իշխանութիւն 'ի ձեռին, Բաբիաբոսէ այնոքէն, արքայասպանէն, ապէրաֆոքն առ սուրբ Լուսաւորչէն մեր, սպանողք սրբասուն որբոց նորա և նուաստից, որք իբրեւ զզըպիրս տիրասպանս զարդարին եւ պարծին 'ի չիրիմ հարց իւրեանց ...։ Մեք եւս Հայք եմք, այլ ուղղափառ Հայք եւ ուղղադաւան, քան հարցն մերոց արքոց։ Հայք եմք, այլ հպատակ ընդհանուր գլխոյն եկեղեցւոյ սրբազան պապին Հռովմայ եւ հնազանդ հրամանաց նորա ամենայն իրօք» ... ։ Տես պատ. Մուր. վարժ. Հար. Գ. երես 272։ Այդ գրուցուածքէն տգիտական, ստրկական եւ բոլորովին անիրաւի գրուցուածք չկինիլ. եթէ մենք Հայքս արքայասպան, ապէրաֆոք, Բաբիաբոս եւայլն եղել ենք այս ժամանակէս 1600 տարի առաջ եւ մինչ այսօր հայր Աղէքսանդրի նման մի Մխիթարեան վարդապետ մեր երեսին է տալի իբրեւ պատմական իրողութիւն. հապա մեք, ինչ ասենք այդ Մխիթարեան վարդապետներին մեծին եւ՝ պղտիկին, խելոքին եւ յիմարին, որ մեր աչքին առաջ, հէնց դեռ երէկ, Փարիզումն իրանց՝ Մուրբաի ոսկիներով կենդանութիւն տուողն, իրանց անունը Եւրոպոյ մէջ տարածուելու պատճառ լինողն, Սարգիս վարդապետին անարգութեամբ եւ ապերախտութեամբ եւ զինու զօրութեամբ դուրս արին իր կանգնած անէն եւ խայտառակեցին Ֆրանսիոյ ազգին եւ կառավարութեան առջեւ։ Հէ՛, հայր Աղէքսանդր, մի մտածիր, միտդ բեր Լօնտօնում հագուած զուգուած մարդ գալդ Սարգսի բերած ոսկիներով եւ յետոյ լեզու ունեցիր Հայոց բարբարոս ասելու։

Վ.այ քո գլխին որ եթէ դու հայր Աղէքսանդր չլինէիր, Նաբօլէօնի նման մի մարդ պիտի լինէիր, երբ Հայոց պատմութեան դեռ այլ ու բնը չես իմանում։ Բայց ինչ հարկ կայ մեզ խօսել այս ուղղ, ահա ինքը Սարգիս վարդապետը նրա բերանը ցեխում է այսպէս։

«Հայ եմք, ասէք, այլ հպատակ ընդհանուր գլխոյն եկեղեցւոյ Ս. պապին Հռովմայ եւայլն» . . . . . .

Հակասութիւն բանից տեսանեմ ես յայս յայտարարութիւն ձեր, եւ յիրաւի՝ քանզի հրամանք Ս. պապին Հռովմայ 'ի կաթոլիկոսութիւնս Եղեղեցոյ 'ի ձեռն պաշտօնէից իւրոց կատարին. եթէ արդարեւ հնազանդ էք նմա, ապա որպէս ճանաչէք դուք զատենադպիր Սրբոյ Ժողովոյն եւ զորմէ գրէք 'ի թուղթն ձեր առ հայր Գաբրիէլ թէ՝ «քոյ է Պատնապն հալան շուն է, որ ոչ այլ ինչ առնէ բայց եթէ հաչել» եւ ընտրելոյ նորին Գեր. Հասունի այնչափ նախատինս եւ անարգանս տայք 'ի գրքոյկ ձեր։ Ապա յայտ է թէ չէք դուք յամենայնի հնազանդ հրամանաց Ս. պապին եւ կարգաւորութեանց նոցին։

Տեսանէք զհակասութիւն բանից ձերոց յայս յայտարարութիւնդ, որով պարծիք դուք . . . . եւ յորմէ յայլ անտեղութիւն անկանիք դարձեալ ասելով այսպէս։

«Ո՞ր օգուտ մեզ 'ի նոցանէ, կամ զինչ երկիւղ իցէ մեզ 'ի ցասմանէ նոցա, բաժանեալք էին, եւ թող իսպառ բաժանեալ կայցեն»։

Ուրեմն յորժամ չիք ձեզ օգուտ ինչ 'ի նոցանէ, չահ ինչ արծաթոյ, խպառ բաժանեալ կայցեն. ապա ուրեմն քարոզութիւն ձեր՝ վասն չահու արծաթոյ, եւ ոչ վասն միութեան սուրբ Եկեղեցւոյ ըստ սկզբանց հիմնադրին ձերոյ մեծին Մխիթարայ եւ ըստ նպատակի նորին։

«Կամ զինչ երկիւղ իցէ 'ի ցասմանէ նոցա — երկիւղ հալածելոյ 'ի նոցանէ»։

Ուրեմն առ երկիւղի չհրաժարակէիք դուք ցարդ զրով, թէ հերձուածող եւ հերետիկոս են Հայք, զի մի հալածէին զձեզ այսի 'ի Պոլսոյ։

Հովիւք քաջ, որք վասն ըրդոյ եւ կաթին ոչխարայ խնամ տանին նոցա եւ յորժամ չունին ակնկալութիւն ինչ անտի՝ անտես առնեն զնոսա։

Առաքելական քարոզիչք առ երկիւղի թաղուցանեն զճշմարտութիւն։

Ո՞չ ապաքէն սոյնպէս ճանաչեն եւ քարոզեն աշակերտք Ծաւալոցին որոց հակառակ էիք դուք երբեմն, եւ ազգատեաց համարէիք զնոսա։

Ապա յայտ է զի սեփականեալ էք դուք այժմ զսկզբունս նոցա եւ օտարացեալ 'ի սկզբանց հարցն ձերոց առաջնոց։

Աւա՛ղ վաստակոց նոցա։

«Եւ մինթէ անդիտանան Հայք, ասէք, թէ բաժանեալ եմք 'ի նոցանէ. ապա թէ՝ ոչ՝ ընդէր էր նոցա հալածել զմեզ քան եւ հինգ ամօք յառաջ . . . .»։

Առ այս ասեմ նախ՝ թէ մոռացեալ իցէ ձեր երբեմն տուեալդ պատճառն քան եւ հինգ ամօք հալածանացն, զոր ետուք մեզ ասա

յամին 1816 եւ զոր ոչ ես եւ ոչ այլք որք լուան 'ի ձէնջ մոռացեալ են երբէք, քանզի պատմեցիք մեզ զայն այսպէս։

«Թէ յընտրութիւն Նուրիճանին յարքեպիսկոպոս ուղղափառաց ազգիս 'ի ժողովի անդ դտանի եւ Ղազէզ Յարութիւն, որ եւ առաջինն լինի 'ի ժողովականաց անտի հաճ եւ հաւան եղելոց ընդ ընտրութիւնն այն եւ համբոյր մատուցանող աջոյ Նուրիճանին, չնորհաւորելով նմա զաստիճան Արքեպիսկոպոսութեան նորա այդր։ եւ թէ՝ յետոյ ասացեալ են ոմանք 'ի Գաղատացւոց անտի ժողովոյն, թէ ընդէր չուն հերետիկոսն այն Ղազէզն 'ի ժողովս ուղղափառաց մտանէ։ Զայս լուր հասանէ յականջս նորա Հիւրմիւզ եղբայր դերապայծառին մերոյ, լուեալ Ղազէզ Յարութենի զայն զայրանալ յոյժ, հանել տալով վճիռ 'ի Սուլթան Մահմուտէն հալածել 'ի Պոլսոյ զամենայն Գաղատացիս եւ 'ի սաստկանալ վճռոյն անկանին 'ի ներքոյ նորին եւ այլք բազումք 'ի Գաղատացւոցն եւ աքսորին անտի առ հասարակ, եւ պատճառ այն աղեսից, այնչափ վնասուց եւ չարեաց եղեւ, ասացիք, Հիւրմիւզն քսութեամբն իւրով, ընդ որ եդիտ եւ զհատուցումն 'ի տեառնէ տարաժամ մահուամբ իւրով եւ եղբարց իւրոց»։ Եւ զայլ չար դուշակութիւն ձեր զոր չչարժի զրիչս տողել ասա։

Ապա պատճառ այն հալածանաց ուղղափառաց ազգիս չէ եղեալ 'ի Բաբէրոս և հերետիկոս Հայոց, այլ 'ի քաղաքականացեալ եւ 'ի կարծեցեալ ուղղափառ Հայէ, ըստ բանից պատմութեանդ եւ ըստ դատաստանիդ։

Թողից յիշատակ առնել ասա եւ զայլ հալածանս. որք յայլ եւ յայլ ժամանակս եւ յոր չեն ազատ ուղղափառքն 'ի ստդատանաց։

Երկրորդ՝ աբէյասպան, ապէրքէր ա՝ սոքբ Լ՝սասարբէն Ղէր, սպանող Լ . . . կոչելով ձեր զՀայս, ասեմ ես, թէ կամ չհամարիք դուք զձեզ յազգէն Հայոց եւ կամ գիտէք հաւաստեաւ եւ անսխալ զազգաբանութիւնդ, թէ ցեղն ձեր յորմէ իջանէք դուք, չէ եղեալ բընաւ հաղորդ ապէրքէր էս սպանող ցեղիցն այնոցիկ . . . եւ թէ չիցէ ձեր ընթերցեալ զպատմութիւն Անգղիացւոց, Գաղղիացւոց եւ Ռուսաց 'ի միջին եւ 'ի վերջին դարուց, յորս տեսանէիք թէ քանի թագաւորք եւ հայրապետք սպանեալ են յազգայնոց իւրեանց։

Ապա այս գլուխ բանից թղթոյդ չբերէ պատիւ ոչ յիշողութեանդ եւ ոչ տեղեկութեանդ»։

Կ. Պոլիս 1867 Մայիս 12.

ՄԱՐԿՈՍ ԱԳԱԲԼԳԵԱՆ